

ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ Փաշինեանի Մամուլային Ասուլիսը Պոյքոթողները

Յուլիսի 27-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրահրած էր առջանց ասուլիս պատասխանելու համար լրագրողներու եւ հասարակական կազմակերպութիւններու հարցերուն: Փաշինեան առաջին անգամ չէ որ, երկար տեւողութեամբ ասուլիսով կը ներկայանայ հանրութեան: Ան 3.5 ժամ պատասխանեց մի քանի տասնեակ հարցերու, Հայաստանաւարայեցիներու, Հայաստանաւարութիւններու, մինչեւ կառավարութեան ներքին քաղաքականութեան, դատական համակարգէն ներս բարեփոխումներու դանդաղ ընթացքին, իր ընտանիքի ու քաղաքական շրջապատի հարստացման մասին խօսակցութիւններուն, նախկին իշխանաւորներու ազատութեան մէջ գտնուելուն եւ նաեւ ընդդիմադրութեան վերջին ամիսներու գործունէութեան: Վարչապետը շատ հանգիստ պատասխանեց բոլոր հարցերուն, թէ ասուլիսի ձեւաչափը եւ հարցումներու նախապէս ներկայացուած ըլլալը կ'արտօնէին զանց ընել «դժուար» հարցերը:

Նախքան ասուլիսի կայացումը տեղեկութիւն տարածուեցաւ, որ շարք մը լրատուամիջոցներ որոշած են պոյքոթել վարչապետի ասուլիսը, պատճառաբանելով թէ իրենց լրագրողները գրկուած են դէմ առ դէմ հարց ուղղելու կարելիութենէն եւ այս ձեւաչափով իրենց հարցումները կրնան անտեսուիլ, վերաշարադրուիլ եւ կամ խեղաթիւրուիլ: Այս պատճառաւ ալ առաջին հնչող հարցը եղաւ. «Ինչո՞ւ էք խուսափում լրատուամիջոցների հետ դէմ առ դէմ ասուլիսներից: Ո՞րն է ձեր մտավախութիւնը նախկին գործընկերների հետ ուղիղ շփուելու հարցում»:

Ի պատասխան վարչապետը ըսաւ. «Տարօրինակ է, հեղինակն ասում է՝ ինչու էք խուսափում ուղիղ հարցից, երբ եթերում հնչում է իր ուղիղ հարցը: Բոյկոտել են այն լրատուամիջոցները, որոնք ներկայացնում են այն քաղաքական շրջանակներին, որոնք վերջին շրջանում բոյկոտային լայն գործունէութիւն են ծաւալել»:

Պէտք է հոս ակնարկել, որ պոյքոթող լրատուամիջոցներու մեծամասնութիւնը ուղղակի կամ անուղղակի Ռոբերթ Քոչարեանի, Սերժ Սարգսեանի ու անոնց շրջապատին կողմէ ֆինանսաւորուող ու կառավարուող մամուլ են, որոնք մոռնալով իրենց բուն առաքելութիւնը, որ է հաւաստի տեղեկու-

Նախնական Քննարկումներ Եղած Են, Բայց Այս Պահին Խաղաղութեան Պայմանագրի Բնագիր Չկայ. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան առջանց ասուլիսով անդրադարձաւ Պաշտոնի հետ խաղաղութեան պայմանագրի հնարաւոր ստորագրման ու այս կապակցութեամբ ըսաւ. «Դեռ պէտք է մէկտեղուեն պատկերացումները, թէ ընդհանրապէս խաղաղութեան պայմանագիրն ինչ դրոյթներ պէտք է ներառի»:

«Եւ պէտք է ասեմ, որ շատ տարօրինակ են Ատրպէյճանից հնչող յայտարարութիւնները, որտեղ փորձ է արւում ցոյց տալ, թէ Հայաստանը ձգձգում է խաղաղութեան պայմանագրի բանակցութիւնները եւ հետագայ ընթացքը: Պիտի ասեմ, որ այդ յայտարարութիւններից յետոյ Հայաստանի Արտաքին Գործերի Նախարարութիւնից առաջարկ է գնացել Ատրպէյճանի Արտաքին Գործերի Նախարարութիւն, որպէսզի տեղի ունենայ արտաքին գործերի նախարարների հանդիպում, որպէսզի նրանք փորձեն պայմանաւորուածութիւններ ձեռք բերել հետագայ ընթացքի վերաբերեալ: Ատրպէյճանն արդէն առնուազն մէկ դէպք ունենք, երբ ի հեճուկա պայմանաւորուածութիւնների՝ պոյքոթել է, չի ներգրաւուել աշխատանքին: Եւ նախորդ օրուայ Արտաքին Գործերու նախարարութեան կողմից հնչած առաջարկին պատասխան չի ստացուել», ըսաւ ան:



Վարչապետ Նիկոլ Փաշինեան առջանց ասուլիսի ընթացքին

Ըստ Փաշինեանի՝ նախնական քննարկումներ եղած են, բայց այս պահին խաղաղութեան պայմանագրի բնագիր չկայ: Պայմանաւորուածութիւն ձեռք բերած է շարունակել աշխատանքը: «Ի միջի այլոց, այսօր այդպիսի մի հանդիպում նախատեսուած էր, բայց ատրպէյճանական կողմը հրաժարուել է այդ հանդիպմանը մասնակցել»:

Փաշինեան յաւելեց, որ ընդհանրապէս Ատրպէյճանի խօսույթը մեծ խնդիր եղած է եւ կը շարունակէ այդպիսին մնալ: «Նաեւ միջազգային հանրութիւնը, կարծում եմ, արձանագրում է, որ Հայաս-

տանն ամէն անգամ փորձում է լինել առաւելագոյն կառուցողական, բայց դրան ի պատասխան մենք տեսնում ենք Ատրպէյճանի շարունակաբար յարձակողական հռետորաբանութիւնը», նշեց ան:

Առջանց ասուլիսին վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ Հայաստան-Թուրքիա երկխօսութեան: Ան նշեց, որ նախապէս ալ փաստաթուղթ ստորագրուած է

Կայացաւ ՍԴՀԿ 135-Ամեակին Նուիրուած Ազգային Երգերու Երեկոն



Տեսարան՝ ՍԴՀԿ 135-Ամեակին նուիրուած ազգային երգերու երեկոյէն

Շաբաթ, Յուլիսի 25-ի երեկոյէան ՀԿԲՄ-ի Փաստօրինայի կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 135-Ամեակին նուիրուած Ազգային երգերու երեկոն՝ բացումը կատարելով այս առթիւ նախատեսուած միջոցառումներու շարքին:

ներկայ էին ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի անդամներ, կուսակցութեան անդամներ, համակիրներ եւ մեծ թիւով երիտասարդներ:

Երեկոյի բացման խօսքը կատարեց Ընկերուհի Ծովիկ Բորոյլ-

Մինսքի Խումբի Ռուս Համանախագահը Չէ Ընդունած ԼՂ Հարցով Քննարկման Հրաւերը. ԱՄՆ Պետական Քարտուղարութիւն

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով գրասենեակը յայտնած է, որ ԵԱՀԿ Մինսքի Խումբի ամերիկացի համանախագահ Էնտրիու Շոֆըրը գործընկերներուն հետ քննարկած է Լեռնային Ղարաբաղի հարցը: Գրասենեակի թուիթըրեան էջով հրապարակման մէջ նշուած է նաեւ, թէ ԵԱՀԿ Մինսքի Խումբի ռուս համանախագահ Իկոր Խովաւելը հրաժարած է քննարկման մասնակցելէ:

«ԵԱՀԿ Մինսքի Խումբի ամերիկացի համանախագահը այսօր խօսած է իր գործընկերներուն հետ՝ քննարկելու Լեռնային Ղարաբաղի ապագան: Յաւանքով, Ռուսիոյ համանախագահը չէ ընդունած հրաւերը: Մենք անհամբեր կը սպասենք Մինսքի Խումբի աշխատանքներու շարունակման», կ'ըսուի գրառման մէջ:

Միւս կողմէ, Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զարարովան յայտնեց որ, Ուաշինկթըն եւ Փարիզ կը մերժեն գործակցիլ՝ Մինսքի Խումբի շրջագիծէն ներս:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ընդդիմութիւնը Ստիպուած է Դադարեցնել Շպագատն Ու Երկու Ոտքով Լինել Մէկ Վայրում՝ Կա՛մ Խորհրդարանում, Կա՛մ Փողոցում

ՅԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ընդդիմութեան կողմից տարուող փողոցային պայքարի ընթացքում քանիցս հնչել ու հնչում է այն հիմնաւորումը, թէ ժողովուրդն իրենց քուէ է տուել գործող իշխանութեանը հեռացնելու համար: Այս միտքը տարբեր շարադասութեամբ ու ձեւակերպումներով յայտնել են թէ՛ «Պատիւ ունեմ» եւ թէ՛ «Հայաստան» խմբակցութեան տարբեր անդամներ: «Մեր համակիրները մեզ մանդատ են տուել, որ իշխանութիւններին հեռացնենք, ու մենք այդ ճանապարհին ենք», - ժամանակ առաջ յայտարարել էր «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սեյրան Օհանեանը: Օրերս էլ իր՝ մանդատից հրաժարուելու մասին յայտարարութեան մէջ նոյն միտքը արդէն քանիւրեքորդ անգամ ձեւակերպած Արթուր Վանեցեանը դեռ Մարտ ամսին՝ մինչեւ փողոցային պայքարի մեկնարկն էր յայտարարել, թէ. «Հանրութիւնը, որը մօտ 8-9 ամիս գտնուում էր փողոցային պայքարում, այն ընդդիմադիր գործիչների հետ, որոնց մի մասը խորհրդարանում է, ունէին սպասելիքներ եւ տուել էին մանդատ ոչ թէ գնալու խորհրդարան եւ կառուցողական աշխատանք իրականացնելու գործող իշխանութեան հետ, այլ մեզ տրուել է մանդատ այս իշխանութիւններին վճարելու, քչելու եւ ստանձնելու երկրի կառավարման պատասխանատուութիւնը եւ երկիրը նորմալ ուղղութեամբ տանելու»:

Ակնյայտ է, որ ընդդիմութիւնը սեփական ամբողջութիւնն ու

անկեղծութիւնը, խորհրդարանի մակարդակում աշխատել չկարողանալն արդարացնելու համար ստիպուած է կիրառել այսպիսի մանիպուլիատիւ մտակառուցներ՝ արդարացնելու փողոցային պայքարի դուրս գալու եւ այս կերպ իր քաղաքական գաղափարներն ապահովելու որոշումը:

Նախ այս ձեւակերպումները, քաղաքական առումով մանիպուլիատիւ լինելուց զատ, նաեւ քաղաքագիտական անզրագիտութեան ազդակող նմուշներ են, քանի որ ցանկացած քաղաքական ուժ կամ միաւորում, որը մասնակցում է ընտրական գործընթացին ու մտնում է քաղաքական մրցակցայքարի մէջ, դա անում է մէկ յստակ նպատակով՝ վերցնել իշխանութիւնը կամ գոնէ ազդեցիկ ներկայութիւն ունենալ պետական կառավարման համակարգում՝ հարցեր լուծելու եւ կամ այդ լուծումները լուծողներին պարտադրել կարողանալու համար: Քաղաքական դաշինքների իմաստը հենց այն է, որ մէկ միաւորի շուրջ քաղաքական կոնսոլիդացիա ապահովելով՝ հնարաւոր լինի աւելի լայն ընտրազանգուածի հակել դէպի իրեն, ստանալ աւելի շատ թուով քուէներ՝ յաւակնելով քաղաքական մեծամասնութեան կարգավիճակին: Իսկ որ «Պատիւ ունեմ»-ն ու յատկապէս «Հայաստան» դաշինքը հենց այդ՝ քաղաքագիտորէն ու ժողովրդավարութեան տեսանկիւնից արդարացուած նպատակադրումով էին մտել ընտրապայքարի մէջ, տեսանելի եւ հասկանալի էր անգամ «Թիթեոնիկ» մանկապարտէզի միջին խմբի սաներին: Քարոզարշաւի ողջ ըն-

թացքում եւ դրանից առաջ ծաւալուած՝ «Հայրենիքի փրկութեան շարժման» ընթացքում ընդդիմութեան կողմից երբեք հնչե՞լ է հանրութեանն ուղղուած այսպիսի պահանջ՝ տուէք մեզ այնքան մանդատ, որպէսզի ԱԺ-ում փոքրամասնութիւն դառնանք, դէ իւրէ ստանձնենք ընդդիմադիր խմբակցութեան կարգավիճակ ու, մտնելով խորհրդարան, սկսենք իշխանութեան վճարման գործողութիւնը: Ընդհակառակը՝ քարոզարշաւի ու ընտրապայքարի մարտավարութիւնը խարսխուած էր տարբեր ճակատներով իշխանութեան ամրոցը գրոհելու, մինչեւ «քոք մաշեցնելու» եւ ամբողջ իշխանութիւնը վերատիրելու տրամաբանութեան վրայ:

Սակայն ընտրութիւնների արդիւնքներն, ինչպէս յայտնի է, արձանագրեցին բոլորովին այլ պատկեր. հանրութիւնը ոչ միայն իշխանութիւն դառնալու մանդատ չտուեց վերոյիշեալ խմբակցութիւններին, այլեւ գոնէ այնքան քուէ, որ վերջիններս կարողանան կոալիցիա կազմել եւ այսպիսով ստանձնել կառավարման ղեկը: Հետեւապէս իշխանութիւն վերցնելու մեծ ախորժակ ունեցող քաղաքական դաշինքները յայտնուեցին ընդդիմութեան կարգավիճակում եւ իրավիճակի թեւադրանքով ստիպուած եղան դիմել սպեկուլիացիայի՝ սեփական ընտրողների անունից իրենք իրենց վերագրեցին մի առաքելութիւն՝ իշխանութեան վճարում, որն այլեւս աւարտուած էր ընտրութիւնների արդիւնքներով: Պարզ ասած՝ հանրութիւնը ընտրութիւնների ժամանակ քաղաքական յայտնի հիմ-

նական ուժերին մանդատ էր տալիս իշխանութիւն ստանձնելու եւ կամ վերաստանձնելու համար՝ այսպիսով լուծելով իշխանութեանը հեռացնելու եւ միաժամանակ նոր իշխանութիւն ձեւաւորելու հարցը: Այնպէս որ, ընտրութիւններից մէկ տարի անց ընդդիմութիւնը պէտք է համակերպվի առկայ իրողութեան եւ սեփական կարգավիճակի հետ եւ կատարի այդ կարգավիճակից բխող գործողութիւններ:

Եւ եթէ անգամ առաջնորդուենք ընդդիմութեան մանիպուլիատիւ արդարացմամբ, ապա մանդատները վերցնելուց եւ խորհրդարանում յայտնուելուց յետոյ ընդդիմութեան անելիքը իրեն տրուած մանդատի՝ իշխանութեան իրացումը պէտք է լինել այն չափով, որով նրան օժտել է ժողովուրդը: Լինել ընդդիմութիւն՝ չի նշանակում չունենալ իշխանութիւն: Լինել ընդդիմութիւն՝ նշանակում է ունենալ յարաբերականօրէն սահմանափակ իշխանութիւն եւ աշխատել այն յետագայում մեծացնելու, ընդլայնելու, աւելի ազդեցիկ դարձնելու ուղղութեամբ: Իսկ դրան հասնելու միակ եւ արդիւնաւէտ ճանապարհը այսօր ունեցած իշխանութիւնն իրացնելն է՝ կառուցողական դաշտում, ի շահ պետութեան ու քաղաքական համակարգի աշխատեցնելու միջոցով: Մի բան, որն ընդդիմութիւնը չի անում խորհրդարան ոտք դնելու առաջին

Շար.ը էջ 8

Ինչ են Սկսում Հայաստանը, Յունաստանն Ու Կիպրոսը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի արտգործնախարար Զոհրապ Մնացականեանի Յունաստան կատարած այցով: Նախատեսուած էր, որ 2020 թուականի սկզբին Երեւանում տեղի կ'ունենայ եռակողմ ձեւաչափի առաջին վեհաժողովը: Սակայն, 2020 թուականին իրադարձութիւնները զարգացան այլ տրամաբանութեամբ եւ միջազգային իրադրութիւնը նախ հիմնարար մթնոլորտային փոփոխութեան ենթարկուեց իրանի յատուկ զօրքերի հրամանատար, գեներալ Ղասեմ Սոլեյմանիի սպանութեամբ, որ իրականացուեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի քաղաքական որոշմամբ, իսկ յետոյ միջազգային զարգացումների վրայ համատարած ազդեցութիւն թողեց կորոնավիրուսի համաճարակը:

Մասնաւորապէս Հայաստանի առնչութեամբ իրավիճակը արմատական փոփոխութեան ենթարկուեց արդէն 44-օրեայ պատերազմից յետոյ, ինչը բնականաբար հարցեր առաջ բերեց նաեւ Հայաստան-Յունաստան-Կիպրոս եռակողմ ձեւաչափի արդիականութեան եւ յետագայ ընթացքի առնչութեամբ: Սակայն, ինչպէս երեւում է, Աթէնքը, Նիքոսիան ու Երեւանը տրամադրուած են առաջ մղել եռակողմ գործակցութիւնը, ինչը թեւադրուած է անշուշտ մի շարք իրողութիւններով, կապուած թէ՛ համաշխարհային լայն վիճակի հետ, թէ՛ մասնաւորապէս առաւել լոկալ հանգամանքների, որ թեւադրուած են այդ նոր իրադրութեամբ: Այստեղ

բնականաբար առանցքային տեղ է զբաղեցնում թրքական գործօնը եւ այն զսպելու, կառավարելու ընդհանուր հետաքրքրութիւնը, որ ունեն երեք երկրները: Աւելին, ներկայումս Յունաստանն ու Թուրքիան գտնուում են խիստ լարուած յարաբերութեան փուլում, փոխադարձաբար ցուցադրուող ռազմական միջոցներով: Յունաստանն այդ հարցում զգալիօրէն ապաւինում է Նահանգներին, որոնք վերջին շրջանում էապէս մեծացրել են Յունաստանում իրենց ռազմական ներկայութիւնը: Այդ առումով, ի դէպ, Հայաստան-Յունաստան-Կիպրոս ձեւաչափը Հայաստանի համար թերեւս նաեւ վերածուած է անվտանգութեան եւ համաշխարհային ռազմա-քաղաքական իրադրութեան հարցերում եւրատալանտեան բեւեռի հետ հարողակցութեան լրացուցիչ հարթակի, ինչը կարեւոր անհրաժեշտութիւն է կովկասի ռեզիոնում մեր ռիսկերի կառավարման տարբերակուած համակարգ ձեւաւորելու տեսանկիւնից:

Վերադառնալով Թուրքիայի գործօնին, հարկ է թերեւս միաժամանակ արձանագրել նաեւ, որ Հայաստանը աշխատելով Յունաստան-Կիպրոս-Հայաստան եռակողմ ձեւաչափում, այդուհանդերձ դա պէտք է անի թերեւս ոչ Թուրքիայի հետ յարաբերութեան կարգաւորման աշխատանքային գործընթացի հաշուին, եւ առանց աւելորդ

բնականաբար առանցքային տեղ է զբաղեցնում թրքական գործօնը եւ այն զսպելու, կառավարելու ընդհանուր հետաքրքրութիւնը, որ ունեն երեք երկրները: Աւելին, ներկայումս Յունաստանն ու Թուրքիան գտնուում են խիստ լարուած յարաբերութեան փուլում, փոխադարձաբար ցուցադրուող ռազմական միջոցներով: Յունաստանն այդ հարցում զգալիօրէն ապաւինում է Նահանգներին, որոնք վերջին շրջանում էապէս մեծացրել են Յունաստանում իրենց ռազմական ներկայութիւնը: Այդ առումով, ի դէպ, Հայաստան-Յունաստան-Կիպրոս ձեւաչափը Հայաստանի համար թերեւս նաեւ վերածուած է անվտանգութեան եւ համաշխարհային ռազմա-քաղաքական իրադրութեան հարցերում եւրատալանտեան բեւեռի հետ հարողակցութեան լրացուցիչ հարթակի, ինչը կարեւոր անհրաժեշտութիւն է կովկասի ռեզիոնում մեր ռիսկերի կառավարման տարբերակուած համակարգ ձեւաւորելու տեսանկիւնից:

Վերադառնալով Թուրքիայի գործօնին, հարկ է թերեւս միաժամանակ արձանագրել նաեւ, որ Հայաստանը աշխատելով Յունաստան-Կիպրոս-Հայաստան եռակողմ ձեւաչափում, այդուհանդերձ դա պէտք է անի թերեւս ոչ Թուրքիայի հետ յարաբերութեան կարգաւորման աշխատանքային գործընթացի հաշուին, եւ առանց աւելորդ

Շար.ը էջ 8



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Ժամկետային Ձինուորները Աստիճանաբար Պիտի Փոխարինուին Պայմանագրայիններով

Հայաստանի մէջ մեկնարկած է 2022 թուականի ամառնային զորակոչը: Այդ առիթով ՀՀ Ձինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի անձնակազմի կառավարման գլխաւոր վարչութեան պետի տեղակալ, գնդապետ Սահակ Սահակեանը Պաշտպանութեան Նախարարութեան կեդրոնական հաւաքակազմին մէջ լրագրողներուն յայտնեց, որ ՀՀ Ձինուած Ուժերու ժամկետային զինուորները աստիճանաբար պիտի հանուին մարտական հերթապահութենէն, եւ առաջնագիծին վրայ անոնց պիտի փոխարինեն պայմանագրային զինուորները:



Գնդապետ Սահակ Սահակեան

բողջ Արցախի պաշտպանութեան բանակի թափուր հաստիքները: Մենք այնտեղ չունենք այսպէս ասած «ճեղքեր», որ չունենանք բաւարար քանակի զօրք ծառայութիւնն իրականացնելու համար», պարզաբանեց Գլխաւոր Շտաբի ներկայացուցիչը:

Գնդապետ Սահակեանի խօսքով՝ անոր նպատակը հիմնականին մէջ ժամկետային զինուորները առաջնագիծէն հանելն է: Ըստ անոր՝ Ձինուած Ուժերը այդպիսի փորձ ունին նաեւ 3-րդ բանակային զօրամասին մէջ, ուր ժամկետայիններուն 90 տոկոսը մարտական հերթապահութեան չի ընդգրկուիր:

«Պաշտպանութեան նախարարի, Ձինուած Ուժերի Գլխաւոր Շտաբի նպատակներից մէկը դա է, որ ժամկետային զինծառայողներին որքան հնարաւոր է՝ առաջնագիծից հանենք: Զգտում ենք, որպէսզի ժամկետային զինծառայողներով մարտական հերթապահութիւն չիրականացնենք հնարաւորութեան սահմաններում: Եւ աշխատելու ենք մնացած բոլոր զօրամիավորումներում այդ փորձը կիրառել», յաւելեց զինուորականը:

Գնդապետ Սահակեանի խօսքով՝ դա ՀՀ պաշտպանութեան նախարարի եւ Ձինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի նպատակներէն մէկն է՝ որքան հնարաւոր է՝ առաջնագիծէն հանել ժամկետային զինուորները եւ անոնց փոխարին մարտական հերթապահութեան ընդգրկել պայմանագրային զինուորները, եւ այդպիսի նախադէպեր արդէն կայ 3-րդ բանակային զօրամասի եւ Արցախի պաշտպանութեան բանակի օրինակով:

Գնդապետ Սահակ Սահակեանը պարզաբանեց, որ ռազմաքաղաքական ղեկավարութեան կողմէ որոշում կայացուած է Արցախի մէջ ծառայութիւնը իրականացնել պայմանագրային զինուորներով՝ հիմնականին մէջ Արցախի միջոցներով:

«Մեր վերջին զօրակոչը՝ 2020 թուականի ամրան ժամկետային զինծառայողների զօրակոչը, կը զօրացրուի Յուլիսի 1-ից մինչեւ Օգոստոսի 30-ը, եւ այլեւս Արցախում չենք ունենալ ժամկետային զինծառայողներ: Արցախի համար մշակուած է ծառայութեան գրաւչութեան համար լուրջ փաթեթ, ներդրուած է փաթեթը, դրա հիման վրայ, հիմնականում Արցախի աղբիւրից, պայմանագրային զինծառայողներով համալրուած են ամ-

Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը 5 Ամսուան Մէջ Աճած Է 10.2 Տոկոսով

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թուականի Յունուար-Մայիսին 10.2 տոկոսով աւելցած է նախորդ տարուայ Յունուար-Մայիսի նկատմամբ: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական կոմիտէին հրապարակած տուեալները:



ուար-Մայիսին 2021-ի Յունուար-Մայիսի համեմատ աճած է 9.6 տոկոսով: Իսկ ելեկտրականութեան արտադրութեան ծաւալը Յունուար-Մայիսին նախորդ տարուայ նոյն ժամանակին համեմատ աւելցած է 13.1 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ այս տարուայ Յունուար-Մայիսին նախորդ տարուայ նոյն ժամանակին համեմատ արձանագրած է 36.6 տոկոս աճ: 2022 թուականի Յունուար-Մայիսին նախորդ տարուայ նոյն ժամանակին համեմատ արտահանումը աճած է 27.5 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 42.2 տոկոսով:

Դրամին փոխարժէքը տոլարին նկատմամբ Յունուար-Մայիս ամիսներուն կազմած է 477.34 դրամ:

Արդիւնաբերական արտադրանքին ծաւալը այս տարուայ Յունուար-Մայիսին նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 2.7 տոկոսով: Շինարարութեան ծաւալը 2022-ի առաջին 5 ամիսներուն նախորդ տարուայ նոյն ժամանակին համեմատ աւելցած է 11.4 տոկոսով:

Առեւտրի շրջանառութեան մէջ Յունուար-Մայիսին 2021-ի Յունուար-Մայիսի նկատմամբ աւելացումը կազմած է 8.9 տոկոս: 2022 թուականի Յունուար-Մայիսին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցած է 24.9 տոկոսով:

2022 թուականի առաջին 5 ամիսներուն սպառողական գիներու ցուցակը 2021-ի նոյն ժամանակահատուածին համեմատ աճած է 7.7 տոկոսով:

Արդիւնաբերական արտադրանքի գիներու ցուցակը Յուն-

Ըստ Ազգային Ժողովի Նախագահին ՔՊ-ն Սօս Օրերս Պիտի Քննարկէ Մանտաթներէն Զրկելու Դարցը

ՀՀ Ազգային Ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը մօտ օրերս պիտի քննարկէր նիստերէն բացակայող ընդդիմադիր պատգամաւորները մանտաթներէն զրկելու հարցը: Այս մասին ըսաւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան Ազգային Ժողովին մէջ լրագրողներու հետ ճեպագրոյցին:



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

«Սօս օրերս խմբակցութիւնում կը քննարկենք, նաեւ վարչութիւնով կը քննարկենք՝ արդեօք արժի, թէ չարժի, որովհետեւ օրէնքը դրա հնարաւորութիւնը տալիս է: Կայ երկու կարծիք. մի կարծիքն այն է, որ այսպէս թէ այնպէս ընդդիմութիւնն ինքն իրեն մեծ հաշուով զրկել է մանտաթներից: Ես, անկեղծ ասած, չեմ պատկերացնում, թէ մեր գործընկերներն այդքան բարձր նշաձող դնելուց ու յետոյ այդ նշաձողը «տակ» մնալուց յետոյ ոնց են վերադառնալու այս դահլիճ՝ Միւս կարծիքն էլ այն է, որ պէտք է մինչեւ վերջ «մաշեցնեն» այն ամէնն, ինչ իրենք արեցին», ըսաւ Սիմոնեան:

Ըստ Ազգային Ժողովի նախագահին՝ այս պահուն 10 պատգամաւոր կայ, որոնց բացակայութիւններուն քանակը թոյլատրելիէն բաւականին շատ է, ինչ որ թոյլ կուտայ զանոնք մանտաթէն զրկել: «Պատիւ Ունեմ» խմբակցութեան ղեկավարը այդ ցուցակին մէջ 11-րդն էր, սակայն ան արդէն հրաժարականի դիմում ներկայացուցած է: Սիմոնեան չբացառեց, որ որոշ անձերու հարցով գուցէ քննարկեն եւ քաղաքական որոշում կայացուի՝ չզրկել Սահմանադրական Դատարան: Մէկտեղ չբացառեց, որ, որոշ ընդդիմադիրները կը զրկեն նաեւ Ազգային Ժողովի փոխնախագահի, յանձնաժողովներու նախագահներու պաշտօններէն:

«Ընդդիմութիւնը զբաղուած է պաշտօնակազմով ու դա արդէն անում է բացայայտ: Իրենք, ամէն ինչ թողած, հիմա մեկնաբանում եւ

բացատրում են, թէ ինչու իրենց չի կարելի մանտաթից զրկել: Առաջին օրից այս ամէնը եղել է պաշտօնակազմ, ու՛ր՛ն Դաշնակցութեան, ու՛ր՛ն Ռոպորթ Քոչարեանի աջակիցների համար սա պաշտօնակազմ է, մանտաթ ունենալու խնդիր է, որ ունենան անձեռնմխելիութիւն, որ գնան ոստիկանին հարուածեն ու ասեն, որ իրենք պատգամաւոր են», մասնաւորապէս ըսաւ Աժ նախագահը:

Անդրադառնալով 2018 թուականի պատգամաւորական անհագանութիւններուն հետ համեմատականին՝ Սիմոնեան ըսաւ, որ այն ժամանակ թէ՛ Նիկոլ Փաշինեանը, թէ՛ ուրիշ ընդդիմադիր պատգամաւոր չէր լրացուցած բացակայութիւններու այն քանակը, որ պէտք էր մանտաթէն զրկելու համար: Ան համեմատականները տեղին չհամարեց:

«Շփոթել համաժողովրդական շարժումը եւ Դաշնակցութեան կուսակցութեան, Հանրապետական կուսակցութեան աջակիցների պահուածքը Երեւանի փողոցներում: Անհամեմատելի են: Արդիւնքներն ապացուցում են իմ ասածի ճշմարտացիութիւնը», եզրափակեց Ազգային Ժողովի նախագահը:

ՔՊ Խմբակցութիւնը Որոշած Է Պաշտօնէն Զրկել Իշխան Սաղաթէլեանը

Յունիս 28-ին, Civic.am-ի հետ զրոյցին «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան քարտուղար Արթուր Յովհաննիսեանը հաստատեց տեղեկութիւնները, որ իշխող խմբակցութիւնը որոշած է պաշտօններէն զրկել Վահէ Յակոբեանը եւ Իշխան Սաղաթէլեանը:

«Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը որոշում կայացուցած է Ազգային Ժողովի նախագահի տեղակալի պաշտօնէն հեռացնել ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութիւնը ներկայացնող Իշխան Սաղաթէլեանը, իսկ Վահէ Յակոբեանը՝ հեռացնել Ազգային Ժողովի Տնտեսական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահի պաշտօնէն:

Յիշեցնենք, որ վերջերս աշխուժօրէն կը քննարկուէր նաեւ ընդդիմադիր շարք մը պատգամաւորներ պատգամաւորական մանտաթներէն զրկելու հնարաւորութիւնը:

Նոր Պատմական Մրցանիշ Արձանագրուած Է՝ 673.224 Վճարովի Աշխատատեղի

2022 թուականի Մայիս ամսուան ընթացքին Հայաստանի մէջ արձանագրուած է 673 հազար 224 վճարովի աշխատատեղի, ինչը բոլոր ժամանակներու պատմական մրցանիշ է:

Աս մասին կառավարութեան նիստին յայտարարեց Վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Անոր խօսքով՝ կը հաշուառուին միայն այն աշխատատեղիները, որոնց համար վճարուած է աշխատավարձ եւ եկամտային հարկ:

«2022 թուականի Մայիսին 2021 թուականի համեմատ մեր աշխատատեղիները աւել են 38 հազար 273-ով, կամ 6 տոկոսով, 2019 թուականի մայիսի համեմատ աւել են 72 հազար 359-ով, կամ 12 տոկոսով, 2018 թուականի մայիսի նկատմամբ՝ 125 հազար 235 աշխատատեղիով: Այսինքն՝ 2018 թուականից ի վեր Հայաստանում ի յայտ է եկել աւելի քան 125 հազար աշխատատեղի», ըսաւ վարչապետը:

«Շփոթել համաժողովրդական շարժումը եւ Դաշնակցութեան կուսակցութեան, Հանրապետական կուսակցութեան աջակիցների պահուածքը Երեւանի փողոցներում: Անհամեմատելի են: Արդիւնքներն ապացուցում են իմ ասածի ճշմարտացիութիւնը», եզրափակեց Ազգային Ժողովի նախագահը:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի եւ Յունաստանի Արտաքին Գործերու Նախարարները Փոխըմբռնման Յուշագիր Ստորագրած Են



Հայաստանի եւ Յունաստանի արտաքին գործոց նախարարները կը ստորագրեն փոխըմբռնման յուշագիր

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան, որ աշխատանքային այցով Յունաստան կը գտնուի, Աթէնքի մէջ հանդիպած է Յունաստանի արտաքին գործերու նախարար Նիքոս Ծենտիասի հետ:

Հանդիպման ընթացքին երկուստէք անդրադարձ կատարուած է երկկողմ յարաբերութիւններուն, կովկասեան տարածաշրջանի վերջին զարգացումներուն, ինչպէս նաեւ Ուքրանիոյ մէջ իրադրութեան: Յունաստանի Արտաքին Գործերու Նախարարութեանէն յայտնած են, որ կողմերը վերահաստատած են յոյն-հայկական բարեկամութիւնն ու ամուր պատմական կապերը, խօսած են համագործակցութեան մասին:

Հանդիպման ծիրին մէջ Հայաստանի եւ Յունաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւններուն միջեւ ստորագրուած է Եւրոմիութեան առնչուող հարցերու վերաբերեալ փոխըմբռնման յուշագիր:

Յունաստան կատարած աշխատանքային այցի շրջանակներուն մէջ ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան հանդիպում ունեցած է Յունաստանի նախագահ Փաթերիաս Սաքելարիոփուլուի հետ:

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալութիւնը 120 Միլիոն Ծուլարի Ներդրում Պիտի Կատարէ Հայաստանի Սէջ

ՀՀ կառավարութիւնը հաւանութեան արժանացուց Հայաստանի Հանրապետութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու միջեւ զարգացման ուղղուած համագործակցութեան դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման առաջարկութեան հաւանութիւն տալու մասին նախագիծը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Թարուտեանն նշեց, որ զարգացման ուղղուած համագործակցութեան դրամաշնորհային համաձայնագրին նպատակն է աջակցիլ Հայաստանին ժողովրդավարութեան եւ տնտեսական կայունութեան ամրապնդման ուղղուած բարեփոխումներու գործընթացին:

«ԱՄՆ ՄԶԳ-ի ընդհանուր նախատեսուած ներդրումը նպատակներին հասնելու համար կազմում է 120.000.000 տոլար, որը կը յատկացուի մասնաբաժիններով: ԱՄՆ ՄԶԳ-ն նախատեսում է բաշխել իր ընդհանուր ներդրումը հետեւեալ կերպ. 68.565.000 տոլար՝ ժողովրդավարութեան խթանման, 51.435.000 տոլար՝ տնտեսական անվտանգութեան բարելավման համար», ըսաւ Արայիկ Թարուտեանը:

Ժողովրդավարութեան խթանման նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցութիւն պիտի տրամադրէ Հայաստանի կառավարութեան փտածութեան դէմ պայքարին, արդարադատութեան, պետական կառավարման համակարգի բարեփոխումներուն մէջ: Փաստաթուղթով նախատեսուած գործողութիւնները միտ-



ուած են ըլլալու մարդու իրաւունքներու պաշտպանութեան, քաղաքական հաշուետուողականութեան հիմնարկներու հզորացման, ընտրական ու քաղաքական գործընթացներուն մէջ բարեփոխութեան պահանջներ, երկրին մէջ արտակարգ իրավիճակներուն մէջ արագ արձագանգելու կարողութիւններու ամրապնդման:

Տնտեսական անվտանգութեան բարելավման նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն պիտի աջակցի պետական հատուածին՝ ստեղծելու արդիւնաւէտ եւ գործող համակարգեր, պիտի աջակցի ներառական եւ տնտեսական ռազմավարութիւններու իրականացման, պիտի օժանդակէ արդիւնաւէտ ներդրումներու համար դրամաշնորհային միջոցներու բացառապատման:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան նշեց, որ սա շատ կարեւոր համաձայնագիր է, կը սպասուի 120 միլիոն տոլարի ներդրում ժողովր-

Ոստիկանութեան Զօրքերը Երկիրը Ապօրինի Ոսնձգութիւններէ Պաշտպանելու Գործառնոյթը Կատարած Են Գնդատօրէն Փաշինեան



Վարչապետը ներկայ կը գտնուի Ոստիկանութեան զօրքերու կազմաւորման 30-րդ տարեդարձին առթիւ միջոցառման

Ոստիկանութեան զօրքերու, Ոստիկանութեան՝ ընդհանուր առմամբ, գործառնոյթը երկիրը, ժողովուրդը ապօրինի ոսնձգութիւններէ պաշտպանել է, ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ արձանագրելով, որ այս գործառնոյթը կատարուած է բարձր մակարդակով եւ ճշգրտօրէն:

Վարչապետը Ոստիկանութեան զօրքերու գլխաւոր վարչութիւն այցելած էր՝ զօրքերու կազմաւորման 30-րդ տարեդարձին առիթով: Ոստիկանութիւնը, ինչպէս որեւէ պետութեան, այսպէս ալ Հայաստանի Հանրապետութեան ողնաշարն է, Ոստիկանութեան զօրքերն ալ Ոստիկանութեան ողնաշարը, ըսած է գործադիր ղեկավարը:

Ան շեշտած է, որ Ոստիկանութիւնը, Ոստիկանութեան զօրքերը՝ մասնաւորապէս, անընդհատ եւ հետեւողականօրէն ցոյց կու տան իրենց ամբողջութիւնը, իրենց վճռականութիւնը, հաստատականութիւնը եւ նուիրուածութիւնը Հայաստանի

Հանրապետութեան իրաւակարգին, Սահմանադրութեան եւ ժողովուրդին եւ սա գնահատանքի արժանի ծառայութիւն է:

Ընդգծելով, որ ոլորտի բարեփոխումներու շատ կարեւոր ճանապարհ պիտի անցնին՝ գործադիր ղեկավարը ըսած է, որ այդ բարեփոխումներու կարեւորագոյն եւ անկրկնաբարային դրոյթներէն մէկը պիտի ըլլայ Ոստիկանութեան եւ Ոստիկանութեան զօրքերու ծառայողներու ընկերային երաշխիքներու հարցը:

«Այդքան գնահատելի ծառայութիւն իրականացնող մարդիկ եւ նրանց ընտանիքները պիտի ունենան ընկերային որոշակի, վստահելի երաշխիքների համակարգով ապահովուածութիւն: Նոյնը վերաբերում է մեր իրաւակարգին, պետական կարգի, անվտանգութեան ապահովման բոլոր ծառայութիւններին: Մենք հետեւողականօրէն գնալու ենք այս ճանապարհով», ըսած է Նիկոլ Փաշինեան:


Պայտըն Յայտնած Է Հայաստանի մէջ ԱՄՆ Նոր Դեսպանի Թեկնածուին Անունը

Միացեալ Նահանգներու նախագահ ձօ Պայտըն Հայաստանի մէջ ԱՄՆ նոր դեսպանի պաշտօնին առաջարկած է Քրիսթինա Քուլիենի թեկնածութիւնը: Այս մասին ըստուած է Սպիտակ տան կայքէջին մէջ:

Քրիսթինա Քուլիենը 2019 թուականէն մինչ օրս Ուքրանիոյ մէջ ԱՄՆ դեսպանի պաշտօնակատարն է: 2016 թուականէն մինչեւ 2019 թուականի Ապրիլը ան զբաղեցուցած է Ֆրանսայի մէջ ԱՄՆ-ի փոխդեսպանի պաշտօնակատարի, դեսպանատան տնտեսական հարցերով խորհրդականի պաշտօնները:

Դիւանագիտական ծառայութեան ընթացքին տարբեր պաշտօններ զբաղեցուցած է Թայլանտի, Բրիտանիոյ, Եւրոմիութեան, Ռուսիոյ, Ֆիլիպիններու մէջ ԱՄՆ դիւանագիտական առաքելութիւններուն մէջ: Քուլիենը եղած է նաեւ ԱՄՆ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի ԵՄ, Ուքրանիոյ եւ Պելաուսիոյ հարցերով տնօրէն:

դավարութեան, փտածութեան դէմ պայքարի եւ տնտեսական անվ-



Հայաստանի մէջ ԱՄՆ նոր դեսպանի պաշտօնին առաջարկած Քրիսթինա Քուլիեն

Գալիֆորնիա ծնած դիւանագէտը ունի քաղաքագիտութեան պսակաւոր արուեստից աստիճան եւ ռազմավարական հետազօտութիւններու մագիստրոսի աստիճան:

տանգութեան, հաստատութեանական զարգացման ոլորտներուն մէջ:

Գագիկ Խաչատրեանի ԱՄՆ-ի Դղեակի Գործարքին Նոր Մանրամասնութիւններ



Խաչատրեաններուն պատկանող 63,5 միլիոն տոլար արժողութեամբ շքեղ առանձնատունը Լոս Անճելըսի մէջ

Այս տարուայ Մայիսի սկիզբը չալտնի դարձաւ, որ ԱՄՆ իրաւապահները կը փափաքին բռնագանձել Խաչատրեաններուն պատկանող 63,5 միլիոն տոլար արժողութեամբ շքեղ առանձնատունը: Այն, ըստ իրաւապահներուն, գնուած է փտածութեան գործարքներով:

«Factor TV»-ն դիմած է ԱՄՆ Արդարադատութեան Նախարարութիւն եւ ըստ ստացուած փաստաթուղթերու՝ 2009 թուականի Յուլի 9-ին՝ Գագիկ Խաչատրեանի Պետական Եկամուտներու Կոմիտէի նախագահ Նշանակուելէն մօտ մէկ տարի անց, Գագիկ Ծառուկեանի առեւտրային ընկերութիւններու կառավարիչ, «Մուլթի Կրուֆ»-ի գլխաւոր տնօրէն Սեդրակ Առուստամեանը 25-ամեայ Գուրգէն եւ 23-ամեայ Արտեօմ Խաչատրեաններուն հետ կնքած է 7 միլիոն տոլարի կեղծ փոխառութեան պայմանագիր: Առուստամեանը Խաչատրեաններուն եւս մէկ փոխառութիւն ալ տուած է 2011 թուականի Յուլի 10-ին՝ 13 միլիոն 400 հազար տոլար՝ կրկին կեղծ պայմանագրով: ԱՄՆ Արդարադատութեան Նախարարութիւնը կը փոխանցէ, որ Գուրգէն Խաչատրեանը առանձնատան ձեռքբերման համար դրամատնային կեղծ տուեալներ ներկայացուցած է:

«Առանձնատունը գնելու համար, որպէս իրենց վճարունակութեան ապացոյց, Գուրգէն Խաչատրեանը վաճառողի գործակա-

լին ներկայացուցած է հայկական դրամատան տրամադրած տեղեկանք, որուն համաձայն՝ հաշիւին ունի աւելի քան 15 միլիոն տոլար: Տեղեկանքը, սակայն, կեղծուած եղած է, եւ նշուած հաշիւին այդ գումարները չեն եղած: Փոխարէնը, 2011 թուականի Յուլի 8-ին Սեդրակ Առուստամեանը 1 միլիոն տոլար կանխավճար փոխանցած է առանձնատան գնման համար, իսկ մինչեւ 2011 թուականի Օգոստոս 3 ինկած ժամանակահատուածին վճարած է աւելի քան 13 միլիոն տոլար», կ'ըսուի հարցման պատասխանին մէջ:

Հայաստանի իրաւապահներուն տուեալներով՝ Առուստամեանը Խաչատրեաններուն ընդհանուր 22,5 միլիոն տոլար կաշառք տուած է: Անոր որպէս հետեւանք, Գագիկ Ծառուկեանին պատկանող ընկերութիւնները միլիոնաւոր դրամներու հարկային պարտաւորութիւն չեն կատարած:

Գագիկ եւ Գուրգէն Խաչատրեանները մեղադրեալի կարգավիճակ ունին: Անյայտ անձի կողմէ Գլխաւոր Դատախազութեան հաշուին 1 միլիոն 254 միլիոն դրամ գրաւի վճարումէն յետոյ Գագիկ Խաչատրեանը ազատ արձակուած է, իսկ Գուրգէն Խաչատրեանը արդէն երկու տարի է՝ կը թաքնուի իրաւապահներէն: Սեդրակ Առուստամեանն ալ կալանքէ ազատ արձակուած է 50 միլիոն դրամ գրաւի դիմաց: Գործին քննութիւնը դեռ կը շարունակուի:

Նախնական Քննարկումներ Եղած Են

Շարունակուած էջ 1-էն

Թուրքիոյ հետ, բայց յարաբերութիւններ հաստատելու հարցը չէ լուծուած: Իսկ պատճառը այն է, որ չնայած ի սկզբանէ չէ եղած կապակցուածութիւն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրին կամ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն հետ, բայց փաստաթուղթի վաւերացման փուլին Թուրքիան այդ կապած է Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւններուն, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտիին մէջ սթաթուս քօ-ի փոփոխութեան հետ:

Հարցին, թէ հիմա՞ ալ Թուրքիան նախապայմաններով կ'առաջնորդուի, Փաշինեան պատասխանեց. «Հրապարակային յայտարարութիւնները մենք կարող ենք

տեսնել, այն, որ Ատրպէյճանն ու Թուրքիան իրար հետ խորհրդակցութիւններու եւ ճշգրտման մէջ են այս հարցով, առնուազն այդքանով կարելի է նկատել, որ կապ կայ: Մենք աշխատում ենք այն տրամաբանութեամբ, որ կայ հնարաւորութիւն եւ պէտք է ամէն ինչ անենք, որ այդ հնարաւորութիւնն օգտագործենք: Օրինակ՝ Թուրքիայից անընդհատ հնչող «Ձանգեզուրի միջանցք» ձեւակերպումները շատ ուղիղ խոչընդոտում են հոլովոյթներին եւ բացասական ֆօն են ստեղծում: Յայտարարութիւններ են հնչեցուած, որոնք այնքան էլ օգտակար չեն հոլովոյթի համար, բայց դա չի նշանակում, որ մենք այդ յայտարարութիւններէն յետոյ դադարեցնելու ենք երկխօսութիւնը»:

Հիմնադրամին Համահայկական Ընդգրկումը Կը Բացառէ Որեւէ Քաղաքական Միտում. Վ. Խաչատրեան



«Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 31-րդ նիստը՝ Երեւանի մէջ

Երեւանի մէջ տեղի ունեցեալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 31-րդ նիստը, որուն մասնակցած են վարչապետ Նիկոլ Փաշինեանը, ՀՀ-ի նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նախագահ Վահագն Խաչատրեանը, Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը եւ այլք:

Վահագն Խաչատրեանը իր խօսքին մէջ նշած է, որ հիմնադրամի խորհուրդի անդամներն ու ամբողջ աշխատակազմը ջանք ու եռանդ պէտք է չինայն, որպէսզի այն գերծ ըլլայ որեւէ քաղաքական շահարկումէ կամ կասկածներէ, ընդգծելով որ Հիմնադրամին համահայկական ընդգրկումը ինքնին կը բացառէ որեւէ քաղաքական միտում, նախընտրութիւն կամ ազդեցութիւն:

«Նաեւ այս պատճառով բոլորս պէտք է երաշխաւորենք հիմնադրամի թափանցիկ, հաշուետու եւ հրապարակային աշխատելու ճիշդ: Այս նպատակի կեանքի կոչման համար ես նաեւ ակնկալում եմ, որ մինչեւ ընթացիկ ամսուայ վերջ պատրաստ կը լինեն Հայաստանի Հանրապետութեան Հաշուեքննիչ պալատի համապատասխան ուսումնասիրութիւններին արդիւնքները», նշած է նախագահը:

««Հայաստան» համահայկական հիմնադրամն իրաւամբ համահայկական այն կառուցան է, որը

գուցէ թէ չունի նմանօրինակը՝ ոչ իր բովանդակութեամբ, ոչ էլ կազմակերպական ձեւով, ու նաեւ այս պատճառով է, որ իւրաքանչիւրիս եւ մասնաւորապէս Հոգաբարձուների Խորհրդի անդամների ամէնօրեայ աշխատանքը պէտք է միտուած լինի հիմնադրամի հանրահաշակմանը, նրա վարկանիշն ու առաքելութիւնը անբասիր պահելուն», նաեւ ընդգծած է Վահագն Խաչատրեանը:

Արցախի նախագահի աշխատակազմին կը հաղորդեն, որ ելույթով հանդէս եկած է Արայիկ Յարութիւնեանը: Ան իր խօսքին մէջ բարձր գնահատած է Հիմնադրամին գործունէութիւնը, ընդգծելով որ համայն հայութեան ջանքերուն շնորհիւ Արցախի մէջ կ'իրականացուին մեծածաւալ բնակարանաշինական աշխատանքներ, որուն արդիւնքով հազարաւոր տեղահանուած ընտանիքներ պիտի ապահովուին բնակարաններով:

Նիստին ընթացքին հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեան ներկայացուցած է հիմնադրամի 2021 թուականի գործունէութեան հաշուետուութիւնը:

2021 թուականի Նոյեմբերին տեղի ունեցած «Կենտրոնակ սահմանային համայնքներ» խորագրով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթօնին հաւաքուած էր 12 միլիոն 351 հազար տոլար:

Այս տարի կը լրանայ «Հայաստան» համահայկական հիմնադրամին 30-ամեակը:

Փաշինեանի Մամլոյ Ասուլիսը Պոյթօթողները

Շարունակուած էջ 1-էն

թիւն հաղորդել իրենց ընթերցողներուն եւ ունկնդիրներուն, կ'զբաղին բացայայտ քարոզչութեամբ ու իշխանութիւններուն հանդէպ թշնամական վերաբերմունքով: Այդ լրատուամիջոցները ունին իրաւունքը եւ ազատութիւնը քննադատելու գործող կառավարութեան ու իշխանութիւններուն՝ մեկնելով հսկայի իրենց դերին: Սակայն, երբ անոնք կը մտնեն ապատեղեկութիւն տարածողի դերին մէջ ու կը միաժամ փոխոյնը հնչող հայիոյանքներուն, հոն է որ անոնք կը կորսնցնեն ազատ մամուլի մասին խօսելու իրաւունքը ու կը դառնան «դեղին մամուլ»: Այս անուանումը միջազգայնօրէն կը տրուի այն թերթ-

րուն, որոնք կը զբաղին սուտ տեղեկութիւններ տարածելով: Իշխանամետ կողմը եւս ունի իրեն սատարող ու ի նպաստ քարոզչութիւն ընող լրատուամիջոցներ, սակայն անոնց մօտ չենք հանդիպիր բացայայտ ապատեղեկատուութեան եւ կամ սուտ լուրերու:

«Դէմ առ դէմ» մամլոյ ասուլիս պահանջող լրատուամիջոցներուն պէտք է յիշեցնել, որ Քոչարեանն ու Սարգսեանը իրենց իշխանութեան օրօք ոչ մէկ անգամ մամլոյ բաց ասուլիսով ներկայացած են լրատուամիջոցներուն, բաւարարելով միայն յատուկ դասաւորուած պայմաններու տակ ու նախապէս համաձայնուած հարցերուն պատասխանելով:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Տիկին Ֆլորա Տունանեանցի Մահը

Խոր ցաւով տեղեկացանք մա-
հը Լոս Անճելըսաս հայ համայնքի
կարկառուն դէմքերէն Տիկ. Ֆլորա
Տունանեանցի, որ պատահած է 87
տարեկանին Հայաստան կատարած
հերթական այցելութենէն վերա-
դարձէն կարճ ժամանակ ետք:



Տիկին Տունանեանց մեծ դեր
ունեցած է Լոս Անճելըսաս հայ հա-
մայնքի կազմաւորման եւ Հայաս-
տանի հետ յարաբերութիւններու
զարգացման մէջ: Ան երկար տարի-
ներ ծառայած է Հայաստանեայց
Եկեղեցւոյ Արեւմտեան թեմէն ներս
ու գլխաւորած ու մասնակցու-
թիւնը բերած է համայնքային
բազմաթիւ կազմակերպութիւններ՝
բարեսիրական ծրագիրներ իրա-
զործելով Հայաստանի մէջ՝ 1988
թուականի աղետաբեր երկրաշար-
ժէն սկսեալ ու յաջորդող տասնամ-
եակներուն:

Ֆլորա Տունանեանց մեծ դեր
ունեցած է նաեւ Լոս Անճելըսի մէջ
Հայաստանի Հանրապետութեան
հիւպատոսարանի հաստատման գոր-
ծին մէջ:

Տիկ. Տունանեանց իր հանգուց-
եալ ամուսնոյն՝ ճորճ Տունանեանցի

հետ միասին մեծագումար նուիրա-
տուութիւններ կատարած են Մայր
Աթոռ Ս. Էջմիածինին, Արեւմտեան
թեմին, Փաստօրնայի Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ բազմա-
թիւ այլ կազմակերպութիւններու:
«Մասիս» շաբաթաթերթը իր
շրջանակի անունով ցաւակցութիւն-
ներ կը յայտնէ Տունանեանցի ընտա-
նեկան պարագաներուն:

«ՄԱՍԻՍ»

Ազգային Երգերու Երեկոն



Շարունակուած էջ 1-էն

եան՝ ներկայացնելով օրուայ հան-
դիսավար՝ Ստեփան Յովակիմեանը:

Ընկ. Յովակիմեան անդրադը-
ձաւ օրուայ խորհուրդին եւ ապա
հակիրճ պատմական ըրաւ Հնչակե-
ան կուսակցութեան անցած եր-
կար ուղիին, որ եղած է պայքար-
ներու շղթայ մը՝ յանուն Հայ
ժողովուրդի ազատութեան ու ան-
կախութեան:

Երեկոյի պաշտօնական բաժնի
աւարտին երաժշտական կատարում-
ներով հանդէս եկան երգիչներ՝
Յարութ Յակոբեան եւ Առնօ Մերտչե-
ան, որոնք հերթաբար ներկայա-
ցուցին ազգային, եւ ազգագրական
երգերու փունջ մը եւ ապա անցան
Հնչակեան կուսակցութեան ու անոր
հերոսներուն նուիրուած յեղափո-
խական երգերուն, խանդավառու-
թիւնը հասցնելով գագաթնակէ-
տին: Այս երգերու ընթացքի երի-
տասարդութիւնը յոտնկայս կը մի-
անար արուեստագէտներուն:
Խանդավառուած մթնոլորտէն



կատարուեցան նուիրատուութիւն-
ներ եւ ապա տեղի ունեցաւ 135-
Ամեակի կարկանդակի հատման
արարողութիւն:

Երեկոն փակուեցաւ Առնօ
Մկրտչեանի եւ Յարութ Յակոբեանի
«Հնչակեան ենք մենք» զուգըրգով:
Իրենց յոտնկայս միացան ներկանե-
րը եւս ու սրահէն հեռացան ոգեւոր-
ուած ու բաւարարուած:

Սէուտական Արաբիոյ Գահաժառանգ Իշխան Ալ Սալման Թուրքիոյ Մէջ



Չորս տարիներ առաջ 2018ին Իսթանպուլի մէջ Սէուտական
Արաբիոյ հիւպատոսարանէն ներս սէուտցի ընդդիմադիր լրագրող ձեմալ
Քաշըքճըրի սպանութեան պատճառով Թուրքիոյ եւ Սէուտական Արաբիոյ
միջեւ յարաբերութիւնները խաթարուած կը մնային: Ներկայի նոր
զարգացումներու պատճառով, այնպէս կը թուի թէ երկու կառավարու-
թիւններ որոշած են նոր էջ բանալ եւ նոր որակ տալ յարաբերութիւն-
ներուն:

Այս կապակցութեամբ անցեալ շաբաթավերջին Սէուտական Արաբ-
իոյ գահաժառանգ իշխան Մուհամմէտ Պին Սալման պաշտօնական
այցելութեամբ Թուրքիա եկաւ եւ ընդունուեցաւ հանրապետութեան
նախագահին կողմէ: Այս առթիւ տեղի ունեցան գլուխ գլխի հանդիպում-
ներ եւ շահեկան զրոյցներ երկու երկիրներու պատուիրակութեանց
միջեւ, որն աւարտեցաւ պաշտօնական ընթրիքով:

Նախագահ Էրտողանի եւ պատուիրակութիւններու հետ հանդիպում-
ներու ընթացքին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններու
բոլոր երեսակները, յատկապէս տնտեսական ոլորտը: Ձեռք բերուած
համաձայնութիւններուն մաս կը կազմեն 10 միլիառ տոլար առեւտրային
շրջանառութիւնը: Պիտի ջնջուի թրքական ապրանքներու դէմ Սէուտա-
կան Արաբիոյ կողմէ հռչակուած անպաշտօն սահմանափակումը: Դիւրու-
թիւններ պիտի ընծայուին Թուրք գործարարներու, որոնք կ'ուզեն
ներդրումներ կատարել Սէուտական Արաբիոյ մէջ:

Լիբանան Եգիպտական Քարիւղ Պիտի Ստանայ Սուրիոյ Վրայով

Նախապէս կնքուած համաձայնութիւններու հիման վրայ՝ Լիբանան
եգիպտական քարիւղ պիտի ստանայ Սուրիոյ վրայով: Վառելանիւթը
պիտի բաշխուի Լիբանանի տարբեր շրջաններու մէջ գործող ելեկտրա-
կայաններուն: Այս նոր կարգադրութեան շնորհիւ երկրի բնակչու-
թիւնը օրական չորս ժամ յաւելեալ ելեկտրականութիւն պիտի ստանայ:
Այսուհանդերձ սոցն որոշումը մեծ խոչընդոտի կը հանդիպի ԱՄՆ-ի կողմէ
Սուրիոյ վրայ դրուած պատժամիոցներ եւ սահմանափակումներու
պատճառով: Այս հարցի լուծման համար բանակցութիւններ կը կատար-
ուին դիւանագիտական ճամբով:

Երեք Հրթիռներ Հիւսիսային Իրաքի Քարիւղային Արտադրամասերու Վրայ

Հիւսիսային Իրաքի նաւթահորերու եւ քարիւղային արտադրամա-
սերու վրայ, երեք օրեր անդադար հրթիռարձակումներու թիրախ
հանդիսացան: Այս առնչութեամբ Իրաքի Սիւլէյմանիէ գաւառի հակա-
ահաբեկչական ուժերու կողմէ ստացուած հառորդագրութեան համաձայն՝
ոչ մէկ վնասի չեն ենթարկուած նաւթահորերը: Միւս կողմէ թրքական
իշխանութիւնները, շրջանէ մը ի վեր տեւական կը սպառնան հիւսիսային
Իրաքի քրտաբնակ շրջանները յարձակումներու թիրախ դարձնել: Իբրեւ
թէ մաքրագործելու իրենց համար վտանգաւոր նկատուող քրտական
ահաբեկչական կազմակերպութիւնները:

Քաթարի Իշխանը Եգիպտոսի Մէջ

Երկար տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով Քաթարի իշխանը
Շէյխ Թամիմ Պին Համատ Ալ Թանի, պաշտօնական այցելութեամբ
Գահիրէ ժամանեց եւ դիմաւորուեցան Եգիպտոսի նախագահ Ապտէլ
Քաթթա Էլ Սիսիի կողմէ: Նշենք նաեւ որ շրջանէ մը ի վեր, Տոհայի
եւ Գահիրէի միջեւ յարաբերութիւնները վատ վիճակ մը ունէին,
ստեղծելով որոշ սահմանափակումներ: Նախապէս գործնական քայլեր
առնուած էին յարաբերութիւնները բարելաւելու կապակցութեամբ եւ
դրական եզրայնագումներ արձանագրուած են:

Այս այցելութեամբ Եգիպտոս լաւատես է որ երկու երկիրներու միջեւ
փոխադարձ եւ արդիւնաւէտ յարաբերութիւններ պիտի ամրապնդուին,
մասնաւորաբար տնտեսական ոլորտին մէջ: Քաթար շուրջ 5 միլիառ
տոլարի ներդրում պիտի ունենայ Եգիպտոսի մէջ: Տեղական «Ալ Ահրամ»
օրաթերթին համաձայն:

Քաթար նախապէս ալ, տնտեսական համաձայնութիւններ կնքած էր:
Նեղոսի ափին 1.3 միլիառ տոլար արժող շքեղ հիւրանոցի կառուցումով
եւ 4.4 միլիառ տոլարի քարիւղի գտարանի մը շինութեամբ: i'g

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Պէյրուօի Մէջ Թրքական Քաղաքականութիւններու Արծարծում



ՇԻՐԱԶ ԵՐԵՒԵՅԱՆ

Թուրքիոյ ներքին իրադարձութիւնները եւ Անգարայի արտաքին քաղաքականութիւնները քննարկելու նպատակով, անցնող օրերուն Լիբանան այցելեց Թուրքիոյ ընդդիմադիր ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան երեսփոխանական պատուիրակութիւն մը, որուն մաս կազմեցին հայ ազգի երեսփոխան Կարօ Փայլանը, Ատանայի շրջանին ալաուի արաբ երեսփոխան Թիւրալ Հաթիմօղլուլարը-Օրուզը եւ Թուրքիոյ խորհրդարանի փոխնախագահի խորհրդական Սէյֆուտին Չէթինը: Երկուշաբթի, 20 Յունիսին, Համրայի «The J Hotel & Spa» պանդոկի ժողովասրահին մէջ տեղի ունեցաւ պատուիրակութեան հանդիպումը լիբանանցի արաբ եւ հայ, նաեւ քիւրտ եւ պաղեստինցի մտաւորականներու, լրագրողներու եւ հասարակական գործիչներու հետ, քննարկելու համար վերոյիշեալ գլխաւոր նիւթերը եւ հիմը դնելու հետագայ հաւանական համագործակցութեան: Քննարկումներուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեանը եւ Լիբանան Շրջանի վարիչ Մարմինի անդամ Ընկ. Վանիկ Տագէսեանը:

Հանդիպումը նախ առիթ մըն էր լիբանանցի ներկաները ծանօթացնելու ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան (HDP), այդ նպատակով ալ մասնակիցներուն բաժնուեցաւ ծանօթացնող գործընկեր մը կուսակցութեան մասին, որ անցնող տարիներուն դարձած է Թուրքիոյ ընդդիմադիր գլխաւոր ուժը եւ իր հովանիին տակ համախմբած է միշտ Անգարայի իշխանութիւններու ճնշումներուն ենթարկուած ուժեր եւ անձնաւորութիւններ՝ ներառեալ քիւրտեր, արաբներ, հայեր, նաեւ ընդդիմադիր հայացքներու տէր Թուրքեր: Կուսակցութիւնը խորհրդարանական վերջին երեք ընտրութիւններուն շահեցաւ երեսփոխանական աթոռներ եւ մուտք գործեց Թուրքիոյ Ազգային ժողով, սակայն շուտով ենթարկուեցաւ ճնշումներու եւ հետապնդումի, որ կը շարունակուին մինչեւ օրս:

Կուսակցութեան շարք մը բարձրաստիճան պատասխանատուներ բանտարկուած են՝ ահաբեկչական կազմակերպութիւններուն աջակցելու անհիմն մեղադրանքով:

Կուսակցութիւնը նաեւ շարունակաբար կ'ամբաստանուի

Թուրքիոյ քրտահայատակ շրջաններուն մէջ Քրտական գինեալ կազմակերպութիւններուն աջակցելու մէջ:

Հետաքրքրական էր այն, որ հանդիպումին ոչ-հայ ներկաներէն շատեր նոյնիսկ չէին գիտեր, թէ նշեալ կուսակցութեան մաս կը կազմեն ոչ միայն քիւրտերը, եւ աւելին, որ կուսակցութեան գլխաւոր ղեկավարներէն ու երեսփոխաններէն մէկը հայ է:

Թիւրալ Հաթիմօղլուլարը-Օրուզ

Նախ խօսք առաւ երեսփոխան Թիւրալ Հաթիմօղլուլարը-Օրուզը եւ առաջին հերթին անդրադարձաւ կուսակցութեան կառուցուածքին: Ան բացատրեց, թէ հաւասարութեան սկզբունքներուն դաւանելով, կուսակցութեան անդամներուն 50 առ հարիւրը կիներ են եւ մնացեալ 50 առ հարիւրը՝ տղամարդիկ, իսկ որպէս ղեկավար



ընդհանուր համաբարտողար են կին մը եւ տղամարդ մը: Խօսելով երկրի ներքին զարգացումներուն մասին, Օրուզ նշեց, որ յեղաշրջումի ձախող փորձէն ետք բռնատիրական վարչակարգը խստացուցած է իր ճնշումը եւ փոքրամասնութիւններուն կուտակած գրեթէ բոլոր իրազորումները արդէն տապալած են: Երեսփոխանը ցաւ յայտնեց, որ վարչակարգը թշնամական վերաբերմունք կը ցուցաբերէ քիւրտերուն նկատմամբ: Ան նշեց, որ Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան կարելի է հասնիլ երբ բոլորին հնարաւորութիւն տրուի սորվելու իրենց լեզուն եւ արդար ու հաւասար ձեւով մասնակցելու երկրի կեանքին:

Ինչ կը վերաբերի երկրի արտաքին ծաւալապաշտական քաղաքականութեան, խորհրդարանի ար-

տաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամ Օրուզ բացատրեց, որ «հարեւաններուն հետ գերօխնդիրներ» խորագրին տակ իշխանութեան հասած էրտողանի վարչակարգը Սուրիոյ պատերազմի սկիզբէն ի վեր անցած է բոլոր հարեւաններուն հետ օխնդիրներուն ենալու սկզբունքին:

Օրուզ շեշտեց հարեւաններուն հետ որեւէ ինդիւր չունենալու անհրաժեշտութիւնը, սակայն մտահոգութիւն յայտնեց, որ իշխանութիւնը կը գործէ նոր-օսմանականութեան գաղափարախօսութեամբ, հետեւաբար կործանած է յարաբերութիւնները հարեւաններուն հետ եւ անցած՝ ծաւալապաշտական նկրտումներու: Ան շեշտեց, որ արտաքին ուժեր պէտք է միջամուխ դառնան տարածաշրջանի հարցերուն եւ առիթ տան, որ շրջանի երկիրները միասնաբար լուծեն իրենց խնդիրները: Օրուզ զօրակցեցաւ նաեւ լիբանանցիներուն եւ պաղեստինցիներուն, քննադատելով պաղեստինեան հարցի շահագործումը Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ: Ան սխալ համարեց Թուրքիոյ գործողութիւնները Սուրիոյ եւ Իրաքի հիւսիսային շրջաններուն մէջ, որովհետեւ վնաս կը հասցնեն շրջանի կայունութեան եւ խաղաղութեան:

Կարօ Փայլան.

Խորհրդարանի տնտեսական հարցերու մնայուն յանձնաժողովի պատասխանատուներէն, հայազգի երեսփոխան Կարօ Փայլան իր խօսքին մէջ նշեց, որ կուսակցութիւնը առաջարկներ ունի լուծելու շրջանի խնդիրները եւ ապրելու կայունութեամբ: Ան նշեց, որ 2013-ին հիմնուած HDP կուսակցութիւնը հիմնուած է երեք հիմնասիւններու՝ ժողովրդավարական հաւաքականութեան, կանանց իրաւունքներու եւ կենսոլորտի պաշտպանութեան վրայ: «Վարչապետ էրտողան դաշ-

նակցեցաւ ազգայնականներուն հետ եւ միակ նպատակն է տապալել մեր նպատակները:

Ներքին հրապարակին վրայ կը գործադրէ բռնատիրական քաղաքականութիւն, իսկ արտերկրի մէջ դիմած է զինուորական ծաւալապաշտութեան»: Ան յիշեցուց, որ իրենց կուսակցութեան բազմաթիւ անձնաւորութիւններ եւ ղեկավարներ այժմ բանտարկուած են, զգուշացնելով կուսակցութիւնը լուծելու վարչակարգի մտադրութենէն, եթէ չըլլայ ներքին ու արտաքին բաւարար զօրակցութիւն:

«Մենք հաւասարութիւն կ'ուզենք Թուրքիոյ բոլոր բաղադրիչներուն համար, առանց պայմաններու», ըսաւ Փայլան:

Փայլան դիտել տուաւ, որ իրենք այսօր էրտողանի վարչակարգին կողմէ կը հետապնդուին այն նոյն պատճառներով եւ յօռուածներով, որոնց պատճառով հետապնդուեցան ու սպանդներու ենթարկուեցան, հայերը՝ 107 տարի առաջ: Ուստի, Փայլան լուրջ մտաւախութիւն յայտնեց, որ այն ինչ պատահեցաւ հայերուն դարձը առաջ, այսօր կրնայ պատահիլ նաեւ ընդդիմադիրներուն եւ քիւրտերուն: «Եթէ անոնք միջոցներ գտնեն, նոյնը կը կատարեն այսօր», ըսաւ Փայլան, խօսելով թրքական ոճրագործութիւններուն մասին: Ան կարեւորեց էրտողանին դիմակայելը՝ ապահովելու համար համագոյակցութիւն թրքական շրջանակի բոլոր բաղադրիչներուն հետ: «Մեր կուսակցութիւնը ժողովրդավարական այլընտրանք կը ներկայացնէ՝ յանուն այս շրջանին մէջ ապրող բոլոր ժողովուրդներուն:

Մենք ռոմանթիք քաղաքական գործիչներ ենք եւ ձեր աջակցութեան կարիքը ունինք՝ իրականացնելու մեր նպատակները», շեշտեց հայազգի երեսփոխանը: «ԱՐԱՐԱՏ»

AEBU SCHOLARSHIP PROGRAM

2022

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE



To apply, visit our website

WWW.AEBU.ORG

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.



ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
 ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

626•344•7321
 AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
 1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Իրաքի Հայոց Թեմի Նորընտիր Առաջնորդ՝ Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկեան

ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկեան

Վերջերս Իրաքի Հայոց Թեմի առաջնորդ ընտրուեցաւ Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկեան:

Արդարեւ, 13 Մայիս 2022ին, Իրաքի Հայոց Առաջնորդարանի սրահին մէջ, Պաղատ, Թեմի նախկին առաջնորդի եւ հոգեւորականաց դասի ներկայութեամբ, ինչպէս նաեւ Ազգային Կեդրոնական վարչութեան եւ Իրաքի տարբեր մարզերէ Պաղատ ժամանած հայ համայնքներու Թաղական խորհուրդներու գումարած ժողովին կատարուեցաւ նոր Թեմակալ առաջնորդի ընտրութիւն:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի բարձր տնօրինութեամբ առաջադրուած Թեկնածուներէն՝ քուէարկութեան արդիւնքով Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ ընտրուեցաւ Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկեան:

Տ. Օշական Կիւլիկեան ծնած է Պէյրութ, Լիբանան. իր նախնական ուսումը ստացած է Պէյրութի Վահան Թէքեան վարժարանին մէջ. եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Հոգեւոր ձեռնարանի սան, այնուհետեւ ուսումը շարունակած է Սուրբ Էջմիածինի Գէորգեան Հոգեւոր ձեռնարանին մէջ, ուր աւարտած է 1986 թ.:

Յունիս 1986էն մնչեւ Ապրիլ 1987թ. ծառայած է իբրեւ կաթողիկոսութեան քարտուղար, ապա ձեռնադրուած է արեղայ, կուսակրօն քահանայ, Էջմիածինի մէջ Գանատայի Թեմի նախկին առաջնորդ՝ Գերաշնորհ Վազգէն արք. Քէշիշեանի ձեռամբ: 1987-1988 թուականներուն ծառայած է իբրեւ հոգեւոր հովիւ Գանատայի Բրիտանական Քոյմպիա նահանգի Վենքուվըր քաղաքին մէջ: 1988ին, Տ. Օշական Կիւլիկեան պաշտպանած է իր Թէզը Աղթամարի կաթողիկոսութեան մասին՝ Օշականի վանքին մէջ, եւ ստացած է Վարդապետի աստիճան:

1989ին, ան իր ուսումը շա-



րունակած է Զուլիցերիոյ Ժընեւ քաղաքը եւ Նիւ Եորքի Քոյմպիա համալսարանին մէջ: 1990էն 1993 թուականներուն ծառայած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Վերահիւան նահանգի Ռիչմոնտ քաղաքի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ մէջ իբրեւ հոգեւոր հովիւ, ապա ուսումը շարունակած է Ռիչմոնտի Աստուածաբանական ճեմարանին եւ Վերահիւանի Համագործակցութեան համալսարանին մէջ:

1993ին նշանակուած է Նիւ Եորքի Սուրբ Վարդան եկեղեցւոյ լուսարարպետ, իսկ 1994ին՝ Ֆլորիտայի Մայիամի քաղաքի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

Մայիամիի մէջ աշխատած է մշտական շէնք մը հաստատելու եկեղեցւոյ համար՝ գործով վարձու շէնքին փոխարէն. ձեռնարկած է Հարաւային Ֆլորիտայի մէջ նոր եկեղեցւոյ կառուցման եւ աշխուժօրէն մասնակցած է դրամահաւաքի ու հողի գնման ջանքերուն, ինչպէս նաեւ՝ եկեղեցական շէնք եւ մշակութային կեդրոն կառուցելու աշխատանքին: Այդ ջանքերուն արդիւնքը եղած է Ֆլորիտայի ներկայ Սուրբ Մարիամ եկեղեցին:

1997ին, Տ. Օշական Կիւլիկեան եղած է Մեսէչուսեթցի նահանգի Չելմսֆորտ քաղաքի Ս. Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը եւ ազդու կերպով մասնակցած է եկեղեցւոյ հիմնական վերանորոգման համար դրամահաւաքի կազմակերպման ու ղեկավարման

գործերուն:

2001ին նշանակուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի 1700ամեակի յանձնարարութեամբ կազմին մէջ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ: Իսկ 2002ին օժանդակած է Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի զարգացման գրասենեակին՝ Նիւ Եորքի մէջ, եւ իբրեւ այցելու հովիւ ծառայած է Թեմի եկեղեցիներուն: 2003ին ստացած է աստուածաբանութեան մագիստրոսի կոչում հովուերգութեան քարոզչութեան մէջ, նաեւ՝ կրօնական ուսուցման վկայական՝ ինտիանա նահանգի Երրորդութիւն Աստուածաբանութեան ճեմարանէն:

Աւելի ուշ, նոյն տարուան ընթացքին, ան նշանակուած է Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Սուրբ Նազարէթ եկեղեցւոյ հովիւ, իսկ 2005ին ստանձնած է Հայկական մարդասիրական ակադեմիոյ կառավարիչի պարտականութիւն՝ Հնդկաստանի հայկական բոլոր եկեղեցիներու հովուութեան կողքին: Այդ շրջանին հիմնովին վերանորոգած է դպրոցական համալիրը եւ երկու եկեղեցիներ Պէնկալի մէջ, Հնդկաստան: Ան այս պաշտօնին վրայ մնացած է մինչեւ Մայիս 2009, ապա վերադարձած է ԱՄՆի Արեւելեան Թեմ, ուր նշանակուած է Փենսիլվանիա նահանգի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ եկեղեցւոյ հովիւ եւ հոն ծառայած է մինչեւ Իրաքի Հայոց Թեմի առաջնորդ ընտրուելը ու Պաղատ փոխադրուելը՝ Յունիս 2022թ.:

Տ. Օշական Կիւլիկեան, 18 Յունիս 2022ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն ժամանեց Պաղատ՝ ընկերակցութեամբ Ազգային Կեդ-

րոնական վարչութեան ատենապետ Պրն. Մելքոն Մելքոնեանի եւ Պասրայի Թաղական խորհուրդի ատենապետ Պրն. Խաժակ Վարդանեանի, եւ դիմաւորուեցաւ ազգային պատասխանատու անձնակազմութիւններու կողմէ: Հայր սուրբը իր անդրանիկ Սուրբ եւ անմահ պատարագը մատուցեց Պաղատի աթոռանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 24 Յունիս 2022ին, հաւատացեալներու հոծ բազմութեան մը մասնակցութեամբ, ուր ներկայ էին նաեւ Պետական ներկայացուցիչներ, Իրաքի մէջ Հայաստանի դեսպանատան գործակատար Պրն. Ալեք Ղարիպեան, եւ քոյր համայնքներու եկեղեցականներ:

Կը շնորհաւորենք Հայր սուրբին ընտրութիւնը եւ սրտանց կ'աղօթենք, որ Ամենակալ Տէր Աստուած իրեն պարգեւէ անսպառ ուժ ու կարողութիւն, առողջութիւն եւ յարատեւ յաջողութիւն իր նոր առաքելութեան մէջ:

Այս առիթով, նաեւ կը շնորհաւորենք Իրաքի հայ գաղութը, որ միշտ եղած է հայկական ամենափայլուն գաղութներէն մին՝ իր եկեղեցատէր եւ ազգատէր զաւակներով, եւ վստահ ենք, որ ան իր նորընտիր՝ նուիրեալ ու եզակի հոգեւոր պարգեւներով օժտուած, երկարամեայ բազում փորձառութիւններու հեռանկարով Հարստացած խանդավառ առաջնորդ, Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկեանի հովուական խնամքին ներքոյ պիտի շարունակէ ապրիլ ազգային-հոգեւոր արժէքներով, պիտի մնայ հաւատարիմ իր ինքնութեան եւ պիտի նուաճէ նոր բարձունքներ:

Ինչ են Սկսում Հայաստանը

Շարունակուած էջ 2-էն

«Ողբերգութեան»: Բանն այն է, որ չնայած խիստ լարուածութեանը, Յունաստանն ու Թուրքիան այդուհանգերձ ունեն նաեւ որոշակի ընդհանուր հետաքրքրութիւններ եւ գտնուում են որոշակի ընդհանուր անվտանգութեան մեխանիզմի շրջանակում: Հետեւաբար, որեւէ պահի բացառուած չէ, որ Աթէնքն ու Անքարան կարող են վերադառնալ յարաբերութեան կառուցողական, կարգաւորման հուն՝ ինչպէս ի դէպ այս օրերին դա տեղի է ունենում Սէուդեան-Արաբիայի եւ

Թուրքիայի յարաբերութեան հարցում: Իսկ այդ պարագայում, երբ յոյն-թուրքական յարաբերութիւնը կարող է վերադառնալ այդպիսի յոյն, Հայաստանը Թուրքիայի հետ առնչուող իր խնդիրներով, մարտահրաւէրներով ու ռիսկերով՝ կը մնայ մենակ: Այդ իմաստով, եռակողմ ձեւաչափի ուղղութեամբ աշխատանքի կարեւորութեամբ հանդերձ, Հայաստանի համար շարունակում է կարեւոր լինել Թուրքիայի հետ ուղիղ հաղորդակցութեան կայուն մեխանիզմի ձեւաւորման ուղղութեամբ աշխատանքը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ընդդիմութիւնը Ստիպուած է

Շարունակուած էջ 2-էն

Իսկ օրից՝ սաբոտաժն ու քաղաքական սադրանքները փորձելով սեփական ընտրողներին հրամցնել որպէս իրեն տրուած մանդատի իրացում:

Հետեւապէս, եթէ ընդդիմութիւնը չի կարողանում աշխատել խորհրդարանի մակարդակում, որտեղ գործողութեւլ է իր ընտրողի կողմից, ապա պէտք է վերջնական որոշում կայացնի այդ մարմնում իր լինել-չլինելու շուրջ եւ, յարգելով իր ընտրողին, դիմի քաղաքական ազնիւ քայլի՝ խոստովանի, որ ունակ չէ աշխատելու, փորձելու կեանքի կոչել իր նախընտրական խոստումները, ազդելու իշխանութեան որոշումներին վրայ, վայր դնի մանդատներն ու վերադառնայ այնտեղ, որտեղ որ էր մինչեւ խորհրդարանում յայտնուելը՝ փողոց:

Ճիշտ է, ընդդիմութիւնն արդէն երկու ամիս է՝ փողոցում է, բայց մի ոտքով դեռ խորհրդարա-

նում է: Քաղաքական այս շաղագատը երկար ու հարատեւ լինել չի կարող՝ հաշուի առնելով շաղագատ իջածի ֆիզիքական պատրաստուածութիւնը, աւելի ճիշտ՝ անպատրաստութիւնը:

Հետեւապէս պէտք է մտածել երկու ոտքով նոյն վայրում լինելու կարեւոր խնդրի շուրջ՝ փողոցում՝ հանրային աջակցութիւն չվայելող սակավամարդ ակցիաներ կազմակերպելով եւ սեփական «քոքն ու բուսը» մաշեցնելով, թէ՛ խորհրդարանում՝ կոնստրուկտիւ, պետականամէտ աշխատանքի շնորհիւ ապագայ խորհրդարանում աւելի մեծ ներկայացուածութիւն ունենալու շանսերն աճեցնելով:

Ընտրութիւնն, ինչպէս ասում են, բոլորին է ու իւրաքանչիւրինը: Միջանկեալ արձանագրենք, որ հանրութիւնը ընդդիմութեանը ոչ միայն իշխանութիւն դառնալու մանդատ չտուեց, այլեւ փողոցային պայքարի միջոցով իշխանութեանը հեռացնելու մանդատ:

«CIVIC.AM»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----

Massis Weekly

Volume 42, No. 25

Saturday, JULY 2, 2022

Azerbaijan Trying to Legitimize a New War Against Armenia— PM Pashinyan



YEREVAN -- Armenian Prime Minister Nikol Pashinyan slammed Azerbaijan and Turkey at a Monday evening press conference for the lack of forward movement in ongoing efforts to normalize relations, adding that Azerbaijan is “trying to build up legitimacy for a new war” by placing blame on Armenia instead.

Asked whether the peace agenda in today's geopolitical realities has a real alternative in relations with Azerbaijan and even Turkey, Pashinyan gave a negative answer.

“The peace agenda has no alternative today, had no alternative yesterday and will have no alternative tomorrow, and we have been doing and will continue to do our best to open an era of peace for the Republic of Armenia and the re-

gion,” the Prime Minister said.

He added that the Azerbaijani side refused to participate in the meeting on the level of the Secretary of Armenian Security Council and the Adviser to the President of Azerbaijan which was scheduled in Brussels today.

“We have no illusions about Azerbaijan's goals and intentions,” the Prime Minister said, noting that promoting the agenda of peace is an issue of principle for the Armenian authorities.

“I have said on many occasions that on this path we need strong nerves, balanced approach and maximal soberness,” he added.

Pashinyan added that Azerbaijan had broken promises to return Arme-

Continued on page 3

Kristina A. Kvien Nominated as New US Ambassador to Armenia

WASHINGTON – Today, President Joe Biden announced his intent to nominate Kristina A. Kvien as new US Ambassador to Armenia replacing Lynne Tracy who has been serving in Yerevan since 2019.

A career member of the Senior Foreign Service with the rank of Minister-Counselor, Kvien serves as Deputy Chief of Mission at U.S. Embassy Kyiv. She was previously Chargé d'Affaires ad interim from 2020-2022. Prior to that, she served as Minister-Counselor for Economic Affairs at the U.S. Embassy in Paris, France and as Economic Counselor at the U.S. Embassy in Bangkok, Thailand. In both Paris and Bangkok, she served more than one year as Acting Deputy Chief of Mission. She also served as Economic Counselor at the U.S. Embassy in London.

Earlier in her career, Kvien was detailed to the National Security Council in Washington, D.C. as Director for EU, Ukraine and Belarus affairs. Other overseas assignments include the U.S. Embassy in Moscow, Russia; the U.S. Mission to the EU in Brussels; and the



U.S. Embassy in Manila, Republic of the Philippines. Domestic assignments include the Office of European and Regional Affairs, and the Office of Central European Affairs, both in the Bureau of Europe and Eurasian Affairs.

Kvien, a native of California, holds a BA from Occidental College and an MS from the U.S. Army War College. She is a recipient of multiple State Department performance awards and speaks Russian and French.

U.S. Reports Russian Co-chair of OSCE Minsk Group Declined Invitation to Discuss Future of Nagorno-Karabakh

WASHINGTON, DC — Russia has boycotted a multilateral discussion on the Nagorno-Karabakh conflict initiated by the United States within the framework of the OSCE Minsk Group, the U.S. State Department said on Tuesday.

“The U.S. OSCE Minsk Group Co-Chair spoke with her counterparts today to discuss the future of Nagorno-Karabakh,” tweeted the department's Bureau of European and Eurasian Affairs.

“It's unfortunate the Russian Co-Chair [of the Minsk Group] did not accept the invitation. We look forward to the Minsk Group's continuing work,” it said.

The State Department division did not specify who else took part in that discussion or give any other details.

The U.S., Russia and France have for decades jointly tried to broker an Armenian-Azerbaijani peace accord in their capacity as the co-chairs of the Minsk Group. According to Russian officials, Washington and Paris stopped



working with Moscow in that format following the Russian invasion of Ukraine.

U.S. Assistant Secretary of State Karen Donfried denied the Russian claims when she visited Yerevan on June 18. She told RFE/RL's Armenian Service that the Minsk Group remains a “very important format” for Washington.

The Russian Foreign Ministry dismissed Donfried's assurances on June 22. A ministry spokeswoman said the U.S. and France caused “irreparable damage” to the mediating format as a result of their broader

Continued on page 3

ACA Strongly Opposes Waiver of Section 907



WASHINGTON, D.C. – On June 24, 2022, the State Department transmitted to Congress the Biden Administration's signed waiver to bypass Section 907 of the FREEDOM Support Act, which bans most U.S. military assistance to the Government of Azerbaijan until it takes demonstrable steps to cease all blockades and other offensive uses of force against Armenia and Nagorno-Karabakh (Artsakh).

The Armenian Council of America strongly opposes waiver of Section 907.

To continue the military aid disparity between Armenia and Azerbaijan, that started with the previous Administration, while the Azerbaijani regime; breaches norms of international law,

illegally detains Armenian prisoners of war and civilians as hostages, continues its aggressive actions against Armenia and Artsakh by violating the November 9th trilateral agreement to cease hostilities, seeks to occupy more and more Armenian and Artsakh territory, continues its attempt to ethnically cleanse Armenians and Armenian cultural sites from the Artsakh region, prefers military aggression over peaceful diplomatic resolution and dismisses the Minsk Group's role (co-chaired by the U.S.) in reaching a peaceful solution to the Artsakh conflict, is objectionable.

Moreover, earlier this year, the U.S. Government Accounting Office

Continued on page 2

Armenian President, Artsakh State Minister Discuss Post-War Humanitarian Challenges



YEREVAN — Armenian President Vahagn Khachaturyan and Artsakh State Minister Artak Beglaryan met today in Yerevan and discussed the general situation in Artsakh and state programs for post-war reconstruction.

During the meeting, according to a statement released by Khachaturyan's office, the two discussed the humanitarian challenges facing Artsakh.

The sides also discussed the agenda of the June 25 session of the Board of Trustees of the Hayastan All-Armenian Fund.

Beglaryan also met with Foreign Minister Ararat Mirzoyan. The interlocutors discussed the situation in Artsakh due to the 2020 Azerbaijani aggression and the process of over-

coming the humanitarian issues.

In particular, they referred to the efforts on raising the issue of the rights of the people of Nagorno Karabakh, including the forcibly displaced population, on international platforms.

In this context, Ararat Mirzoyan and Artak Beglaryan stressed the need for unhindered involvement of international humanitarian organizations on the ground in order to fully address the humanitarian, socio-economic consequences of the war.

The interlocutors exchanged views on the prospects for a peaceful and just settlement of the Nagorno Karabakh conflict, emphasizing the importance of harmonizing the efforts of Armenia and Artsakh.

US and France Have Caused “Irreparable Damage” to Karabakh Negotiation Process: Maria Zakharova

MOSCOW — Russia on Wednesday dismissed a senior U.S. official's assurances that Washington wants to continue to cooperate with Moscow in facilitating a resolution of the Nagorno-Karabakh conflict.

U.S. Assistant Secretary of State Karen Donfried denied at the weekend Russian claims that the United States as well as France stopped that cooperation following the Russian invasion of Ukraine. She said that the OSCE Minsk Group co-headed by the three mediating powers remains a “very important format” for brokering an Armenian-Azerbaijani peace accord.

“France, the U.S. and Russia would continue in that format,” Donfried told RFE/RL's Armenian Service.

“I would like to allow myself to doubt the sincerity of Karen Donfried's statement,” said Maria Zakharova, the Russian Foreign Ministry spokeswoman. “If Washington and Paris really considered the unique mediating format of the Minsk Group important, they would not allow themselves to neglect the mandate approved by all participating states.”

Zakharova claimed that the U.S. and France froze the work of the Minsk Group and caused it “irreparable damage” as part of their broader attempts to isolate Russia on the international stage.

“There is no guarantee that such irresponsible actions will not be re-



peated,” she told reporters in Moscow. “Pretending that nothing happened just won't work. New realities must be taken into account.”

Russia will continue to support the efforts of Azerbaijan and Armenia to unblock economic and transport communications in the South Caucasus, Zakharova said during the briefing today.

“We welcome the intensification of the activities of the trilateral working group, co-chaired by the Deputy Prime Ministers of the three countries [Russia, Azerbaijan and Armenia] to unblock economic and transport communications in the South Caucasus,” she said.


She recalled that on June 3, a regular meeting of this group was held, during which “the parties brought their positions closer on a number of issues.”

USAID to Provide \$120 Million Grant to Armenia

YEREVAN — Under a cooperation development agreement between Armenia and the USA, approved today by the Armenian government for signing, Washington will provide a \$120 million grant to Armenia. The grant program aims to assist Armenia in the process of reforms targeted at strengthening democracy and economic stability.

The USAID investment to achieve the objectives totals \$120,000,000, which will be disbursed in parts. USAID will provide \$68,565,000 to promote democracy and \$51,435,000 to improve economic security.

Taking into account the shocks caused by the COVID-19, the war unleashed against Artsakh in 2020, as well as the fair and transparent parliamentary elections of 2021, “with this



document the US undertakes to support the Republic of Armenia in effective and accountable management, preservation of democratic achievements and overcoming the economic challenges.”

Armenia, Qatar FMs Discuss Bilateral Ties, Regional Security Issues



YEREVAN — The Minister of Foreign Affairs of Armenia Ararat Mirzoyan had a telephone conversation with the Minister of Foreign Affairs of the State of Qatar Sheikh Mohammed bin Abd Al-Rahman Al Thani.

The Foreign Ministers hailed the results of the recent official visit of Armenian Prime Minister Nikol Pashinyan to the State of Qatar, and stressed the need for consistent implementation of the agreements reached during the visit.

The interlocutors referred to the steps aimed at the political dialogue between the two countries, the intensification of mutual visits at high levels and the development of economic ties. The development of cooperation in the fields of information technologies, agriculture, air communication, tourism and education was discussed.

Ararat Mirzoyan and Sheikh Mohammed bin Abd Al-Rahman Al Thani also exchanged views on regional security and stability issues.

ACA Strongly Opposes Waiver of Section 907

Continued from page 1

(GAO) issued a report stating that the State Department “failed to comply with reporting requirements for reviewing U.S. assistance to the Government of Azerbaijan.” Congress needs advance notice and review of any proposed assistance to Azerbaijan and must ensure accountability regarding the prior military aid disparity.

“It is extremely disappointing that the Biden Administration, which has properly acknowledged the Armenian Genocide and has taken a strong stance on genocide prevention, fails to realize that continuing to disproportionately provide military aid to Azerbaijan, will increase the chances of the Azerbaijani dictatorship to ethnically cleanse the Artsakh region of its indigenous Armenian inhabitants,” stated Armenian

Council of America's Chair Mr. Sevak Khatchadorian. “The Armenian Council of America urges Congress to exercise its oversight to avert another genocide of the Armenian people and uphold U.S. values and integrity.”

As a grassroots organization, ACA is dedicated to working with all political leaders, offering Armenian related news, analysis and resources for policymakers, media, students and activists, advocating issues important to Armenian Americans. ACA also aims to strengthen U.S. – Armenia and U.S. – Artsakh ties, the development of programs promoting sustainable economic growth and good governance in Armenia, while promoting the values and responsibilities of global citizenship. For more information, please visit <https://www.armeniancouncil.org/ACA/>

Over 30,000 Expats Moved to Armenia Since Late February



YEREVAN — More than 30,000 expats from Russia, Ukraine and Belarus have moved to Armenia since late February, Minister of Economy Vahan Kerobyan has said, according to Sputnik Armenia.

Kerobyan revealed in an interview published on Tuesday, June 21 that as of June, over 1,200 new companies have been opened in the country.

“This is the approximate number

of those who are already working in Armenia. The figure may change, since we can't very accurately determine the number of tourists from those who have moved here for a longer time,” the Minister explained.

Among the companies opened in the country after the start of the war in Ukraine are industrial enterprises engaged in mechanical engineering, as well as IT firms.

U.S. Reports Russian Co-chair of OSCE

Continued from page 1

attempts to isolate Russia on the international stage.

Visiting Baku two days later, Russian Foreign Minister Sergei Lavrov insisted that “the Minsk Group stopped its activities at the initiative of the American and French co-chairs.”

Prime Minister Nikol Pashinyan suggested on Monday that Lavrov's comments contradict one of the provisions of his joint declaration with Russian President Vladimir Putin adopted in April. It stresses “the importance of using the potential and experience of the OSCE Minsk Group Co-Chairmanship institute in accordance with its international mandate.”

“I think that this contradiction

needs to be clarified,” Pashinyan said, adding that the Minsk Group is not dead.

In recent weeks, Armenia's leaders have called on the U.S., Russian and French mediators to resume their joint peace efforts.

By contrast, Azerbaijani officials and President Ilham Aliyev in particular have repeatedly questioned the need for the group's continued existence. Aliyev has said that Azerbaijan's victory in the 2020 war with Armenia put an end to the Karabakh conflict.

In a statement issued on Tuesday, the Azerbaijani Foreign Ministry urged Yerevan to “stop wasting time on restoring a format the effectiveness of which was always low.”

Azerbaijan Trying to Legitimize a New War

Continued from page 1

nian prisoners of war still held in the country, turned down an Armenian proposal to set up a meeting of the two countries' foreign ministers, and refused to consider a draft plan to reopen a regional railroad.

The Armenian prime minister also condemned Turkey's apparent insistence that any normalization deal be linked to a similar agreement between Armenia and Azerbaijan, calling Ankara's stance “not useful.”

“The Turkish side often makes statements that are not very useful for the process of normalization of Armenian-Turkish relations. The “Zangezur Corridor” formulation coming from Turkey also hinders the process, but the Armenian side sees an opportunity to normalize relations and is sincerely willing to do everything in that direction”, The Prime Minister stated.

Touching upon the question whether there are opportunities for the final normalization of relations with

Turkey, the Prime Minister answered. “If I say now that there is no opportunity, the question will arise as to why we are negotiating. If we negotiate, it means that there is at least a certain understanding that it is possible to do it, it is possible to move forward step by step, in small steps. We often say that the dialogue is not effective, it has not yielded results yet, but on the other hand we see that direct flights, for example, have been restored. But on the other hand, we understand that in the past there were direct flights from Yerevan to Istanbul, from Istanbul to Yerevan. And now we are trying to move forward in small steps.”

The fourth meeting of the Special Representatives of Armenia and Turkey for the normalization process will take place in Vienna on July 1st, the Armenian Foreign Ministry announced on Tuesday.

Deputy Speaker of the National Assembly of Armenia Ruben Rubinyan and Ambassador Serdar Kilic last met in Vienna on May 3.

Orion Summit 2022 Discusses Implementation of Ecosystem Solutions in Armenia



YEREVAN — The Orion Summit 2022 that has kicked off in Yerevan on Wednesday has brought together representatives of technology, financial and other sectors, prominent businessmen, government officials and founders of internationally recognized startups, who will be discussing ecosystem solutions and encouraging their implementation in Armenian companies.

Ecosystem solutions enable businesses and individuals operating in any sector to offer a wide range of services.

Ameriabank, Armenia's leading financial and technological institution, is the Platinum sponsor of the event.

Co-founder of the Orion Worldwide Innovations Armenia Diana Arzumanyan told journalists that the goal of the summit is to summarize the two-year activity of Orion Worldwide and to identify key problems in the ecosystem and their solutions during panel discussions.

She said the event will also present the 5 fastest-growing Armenian startups with the potential to become unicorns (unicorn companies are worth more than \$1 billion). She said they hope to be able to double last year's investment by the end of this year, bringing it to \$50 million.

Ameriabank's Legal Affairs Director David Sargsyan added that the bank has always emphasized the importance of digitalization and digital development, and in its development program stresses the importance of creating ecosystems, facilitating business-to-business and B2B and B2C relationships.

“This is the reason why we consider it important to participate in this summit, and we are taking part in several areas as a major platinum sponsor,” he said.

Sargsyan stressed that Ameriabank considers digital development in Armenia and business to be important.

“We are working on the development of various ecosystems and this event, in our opinion, is one of the most important steps that will stimulate the development of these systems in Armenia,” he said.

One of the top five themes of the Orion Summit 2022 is the employee stock ownership plan (ESOP) that gives workers ownership interest in the company as an incentive for the growth of start-ups, the well-being of the community and the “creation” of

future millionaires. These programs are one of the best ways to incentivize, motivate and reward employees.

Successful tech startups corporatize employees early in their development, accelerating the growth and development of the project. The ESOP can also have a key role in retaining and encouraging talent in Armenia.

The summit is being attended by Armenian Minister of Hi-Tech Industry Robert Khachatryan, head of the Central Bank of Armenia Martin Galstyan, representatives of technology, financial and other business sectors, founders of internationally recognized startups, investors, etc.

The achievements of the Armenian tech companies:

Featured in the panel were companies such as Scylla, coznie, Embodied, Granatus Ventures.

Scylla develops AI-powered real-time physical threat detection solutions that help organizations augment their security infrastructure, optimize operations, save costs, and increase their situational awareness. Using its proprietary technology, Scylla delivers its solutions with exceptional accuracy and performance, minimizing false alarms by up to 99%.

Since officially launching its solutions to the market in 2018, Scylla has experienced a major revenue growth and is now one of the leading real-time physical threat detection solutions on the global market.

Embodied is an industry leading robotics and AI company creating state-of-the-art companion robots to revolutionize human-centric care and wellness by enhancing quality of life for individuals and families.

Embodied has developed Moxie – the next-generation AI robot that complements traditional therapy and supports social-emotional development in kids through play.

Granatus Ventures is the first venture capital firm to provide investment, expertise and networks to startups worldwide that leverage Armenia's potential as an emerging technology hub.

The Fund was initiated in 2013. The principal activity of the Fund is investing in a range of IP, technology or innovation-based companies that capitalize on opportunities in high-growth sectors.

Eighteenth Meeting of the International Joint Commission for Theological Dialogue Between the Catholic Church and the Oriental Orthodox Churches



ROME — The eighteenth meeting of the International Joint Commission for Theological Dialogue between the Catholic Church and the Oriental Orthodox Churches took place in Rome from June 20-24, 2022 and was hosted by the Dicastery for Promoting Christian Unity. It was chaired jointly by His Eminence Cardinal Kurt Koch, Prefect of the Dicastery for Promoting Christian Unity, and by His Grace Bishop Kyrillos, Coptic Orthodox Auxiliary Bishop in the Diocese of Los Angeles, California, USA.

Representatives came from the Catholic Church and from the following Oriental Orthodox Churches: the Antiochian Syrian Orthodox Church, the Malankara Orthodox Syrian Church, the Armenian Apostolic Church (Catholicosate of All Armenians and Catholicosate of the Holy See of Cilicia), and the Coptic Orthodox Church. Archbishop Khajag Barsamian and Bishop Tiran Petrosyan were the representatives of the Catholicosate of All Armenians and Bishop Magar Ashkarian and Father Boghos Tinkjian were from the representatives of the Catholicosate of Great House of Cilicia.

The two delegations met separately on the morning of June 20. Plenary sessions were held from the afternoon of June 20 through June 24, each day beginning with a brief prayer service based on material prepared for the Week of Prayer for Christian Unity.

In the evening of Monday June 20, Cardinal Koch hosted a dinner for the dialogue members in the Casina Pio IV in the Vatican gardens. On the evening of Wednesday, June 22, the members attended Vespers at the Benedictine Collegio di Sant'Anselmo at the kind invitation of the Right Reverend Gregory Polan, OSB, Abbot Primate of the Benedictine Confederation, and shared dinner with the community.

On Thursday, June 23 at 12 pm, His Holiness Pope Francis received the members of the Commission in private audience. His Grace Bishop Kyrillos presented to His Holiness the completed statement of the Commission, "Sacraments in the Life of the Church," and related that the Commission begins a new phase of reflections on the Mother of God. Bishop Kyrillos then presented to Pope Francis a Coptic icon depicting St. Cyril of Alexandria

and Pope Celestine of Rome in recalling the cordial relations between the Churches of Alexandria and Rome at the time of the Ecumenical Council of Ephesus.

In his address, Pope Francis emphasized that this document "will be able to mark a new step forward towards full communion." This leads him to three important dimensions of ecumenical dialogue: baptismal, pastoral and local. "It is in baptism that we find the basis of the communion between Christians and our yearning for full visible unity", the Pope said. "Secondly, ecumenism always has a pastoral character (...) the broad consensus noted by your Commission, not only on baptism but also on the other sacraments, should encourage us to develop more fully a pastoral ecumenism". His Holiness referred to already existing pastoral agreements and asked: "Would it not be possible to extend and multiply such pastoral agreements, above all in those situations in which our faithful are a minority or in the diaspora?" Finally, he highlighted that ecumenism exists already as a primary local reality. "The dialogue of life in the local, everyday relations between our Churches (...) constitute a genuine locus or source of theology."

The plenary session then began its final review of the draft of the Document "Sacraments in the Life of the Church." This process continued through the morning of Wednesday, June 22. The text received unanimous approval and was signed by the co-chairs on Thursday, June 23. After the signing, Bishop Kyrillos presented Cardinal Koch an icon of the Mother of God for the Dicastery.

In keeping with the theme, Aspects of Mariology, The Holy Virgin Mary in the Teaching and the Life of the Church, the following papers were presented: Malpan Dr. Mathew Vellanickal, "Mary in the Biblical Tradition;" Rev. Mark Sheridan, OSB, "The Tradition of the Dormition and Assumption in the Catholic Church's Teachings;" and Bishop Kyrillos, "The Understanding of the Dormition of the Holy Virgin Mary in the Oriental Orthodox Tradition."

This study and discussion will continue at the next meeting, which will take place at the Logos Center of the Saint Bishoy Monastery, Egypt, January 31-February 4, 2023.

Evidence of Armenian Genocide from German Foreign Office Archives Published in Persian

TEHRAN (Tehrantimes/com) – "The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916" compiled and edited by German journalist Wolfgang Gust has been published in Persian.

Parvin Daneshvar is the translator of the book published by Afkar.


In 1915, the Armenians were exiled from their land, and in the process of deportation 1.5 million of them were killed.

The 1915-1916 annihilation of the Armenians was the archetype of modern genocide, in which a state adopts a specific scheme geared to the destruction of an identifiable group of its own citizens.

Official German diplomatic documents are of great importance in understanding the genocide, as only Germany had the right to report day-by-day in secret code about the ongoing genocide.

The motives, methods and after-effects of the Armenian Genocide echoed strongly in subsequent cases of state-sponsored genocide.

Studying the factors that went into the Armenian Genocide not only gives us an understanding of historical genocide, but also provides us with crucial information for the anticipation



and possible prevention of future genocides.

Wolfgang Gust is an independent scholar based in Germany. For many years he was a foreign news editor and correspondent with the highly respected German news magazine Der Spiegel.

He is the author of two previous books about the Armenian Genocide and the Ottoman Empire, as well as several articles related to the subject.



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.



LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

www.massispost.com
Daily News Updates

ԷԶԵՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՌԱԴՈՐ ՆՊԱՏԱԿ - ՄՕՏԱԿՈՐ ՆՊԱՏԱԿ



ՀՆՉԱԿԵԱՆ խումբի Ծրագիրը որ կազմակերպել 1887ին, առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի 1888 թուի ՀՆՉԱԿԻ 11-12 միացեալ թիւին մէջ: Խմբագրական ծանօթագրութիւն մը կը կցուէր անոր, ըսելով. «Այստեղ առաջարկուած Ծրագիրը մենք չենք համարում իբրեւ վերջնական կերպարանք ստացած. նա տակաւին կարող է ենթարկուել մասնաւոր փոփոխութիւնների ու լրացումի, եթէ հարկը պահանջէ: Եւ մենք պատրաստ կը լինենք կատարել այդ, միշտ հաւատարիմ մնալով ծրագրի հիմնական սկզբունքներին ու կէտերին»:

Արդարեւ այս նախնական Ծրագիրը հետագային բաւական փոփոխութիւններու կ'ենթարկուի:

ՀԵՌԱԴՈՐ ՆՊԱՏԱԿ

«Մարդկութեան ներկայ հասարակական կազմակերպութիւնն ունի իրեն յենարան՝ անարդարութիւնը, բռնութիւնը ու ստրկութիւնը: Հիմնուած տնտեսական ստրկութեան վրայ՝ այդ կազմակերպութիւնը մարդկութեան մէջ ծագեցնում է ուժեղ բռնութիւններ, ուժեղ իշխողներ, որոնք հարստահարում են մարդկութեան անհազար ընդհանրութեանը՝ աշխատող աշխարհին, եւ այդպիսով ստեղծում մարդկային շարժարկութիւնների մէջ անհասարկութեան անարդարութիւնը: Այդ անհասարկութիւնը արտայայտուած է մարդկային կեանքի ամէն ճիւղերում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, նոյնպէս եւ նիւթական: Մարդկութեան չնչին փոքրամասնութիւնը իր տնտեսական ու նիւթական մեծ հարստութիւնը, իր քաղաքական ու սոցիալական մեծ ոյժն ու առանձնաշնորհները դիզել ու զօրացրել է անհազար բանող ընդհանրութեան աշխատութեան, քրտինքի ու արեան գնով: Սեփական լիազօրութիւն՝ հիմնուած մարդկութեան ստուար ընդհանրութեան բազմակողմանի ստրկութեան վրայ - անհազար փոքրամասնութեան սկզբունքն ու նշանաբանը, որ այսօր թագաւորում է համայն աշխարհի վրայ:

Իրերու այդ կնճռոտ ու անիրաւ վիճակը կարող է բարեկարգել միայն սոցիալիստական կազմակերպութիւնը՝ ուղղակի ժողովրդական օրէնսդրութեան պահպանութեամբ ու միջոցով՝ տալով ժողովուրդի իւրաքանչիւր անդամին իսկական կարելիութիւն՝ աջակից լինել բոլոր հասարակական գործերի կարգադրութիւններում: Սոցիալիստական կազմակերպութիւնն իրապէս կը պահպանէ մարդկային բնական ու անհրաքելի իրաւունքները, լիառատ կերպով կը նպաստէ իւրաքանչիւր անձի բոլոր ոյժերի, ընդունակութիւնների ու կարողութիւնների լիակողմանի ու լիակատար զարգացման, կը դարձնէ հաւաքական սեփականութիւն՝ արդիւնազորութեան բոլոր արդիւնքն ու գործիքները, ներդաշնակ կերպով կը կանոնաւորէ մարդկութեան սոցիալական ու տնտեսական բոլոր յարաբերութիւրը եւ կը



հանդիսանայ ժողովրդի կամքի ճշմարիտ արտայայտութիւնը:

ՀՆՉԱԿԻ խումբը՝ իր հիմնական համոզումներով լինելով սոցիալիստ, այդ հասարակական կազմակերպութիւնը հանդիսանում է իր իտէալը, նրա ՀԵՌԱԴՈՐ ՆՊԱՏԱԿԸ՝ հայ ժողովրդի եւ նրա հայրնիքի վերաբերութեամբ»:

ՄՕՏԱԿՈՐ ՆՊԱՏԱԿ

Ներկայումս Թուրքաց Հայաստանում հայ ժողովրդի դրութիւնը քաղաքականապէս ու տնտեսականապէս հանդիսանում է իբրեւ ստրկական կացութեան կերպերի մի շղթայակապ գանգուած:

Տնտեսականապէս ժողովուրդը ծանրաբեռնուած է ուղղակի ու անուղղակի բազմաթիւ ու անհազար հարկերի տակ, որոնք կրկնապատկուած, եռապատկուած են քայքայուած ու անանկացած կառավարութեան յաճախ ֆինանսական ճգնաժամերի ժամանակ, ժողովրդի հողը շարանակաբար բռնի կերպով յափշտակուած է կառավարութեան ձեռքով, նրա աշխատութեան արդիւնքը դարձած է մշտական պատառ՝ հարստահարիչ կառավարութեան ու առանձնաշնորհներու ձեռքում անձերի մօտ: Այդպիսի պայմանների թակարդում բանտարկուած ու շղթայուած ժողովուրդն աշխատում ու բանում է բացառապէս կառավարութեան ու շահամոլ դասակարգերին կերակրելու համար:

Քաղաքականապէս նա լիովին իրաւագործի է, դատապարտուած ստրկական լուծութեան, հլու հնազանդութեան, անիրաւ՝ իբրեւ վկայ դատարանում, մեղաւոր՝ երբ իրեն սպանելիս՝ պաշտպաւում է. յանցաւոր երբ հառաչում ու լալիս է՝ իր թշուառ դրութեան վրայ. կրօնքով հալածուած, կեանք ու կայք անպահով, վայրենի ցեղերի աւերիչ ու անարգել յարձակումներին ենթակայ, եւ այդ բոլորի շնորհով՝ հասած է քաղաքական ու ֆիզիքական քայքայման եւ նիւթական աղքատութեան:

Մեր համոզումն այն է, որ այդ թշուառ վիճակից ժողովուրդին փրկելու եւ նրան դնելու այն ուղիի

վրայ, որը նրան միջոց տար դիմելու դէպի սոցիալիստական կազմակերպութիւնը, դէպի այն հեռաւոր նպատակը, անհրաժեշտ է Թուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատութիւն եւ ազգային անկախութիւն, որոնք եւ դառնում ՄՕՏԱԿԱՅ ՆՊԱՏԱԿ:

Պահպանելու համար մեկ անգամ ձեռք բերուած ազգային անկախութիւնը եւ ապահովացնելու համար ժողովրդի հետագայ յառաջդիմութիւնը, որը նրան պէտք է տանի դէպի Հեռաոր Նպատակը, յաղթանակից յետոյ իսկոյն եւ եթ, գործադրել քաղաքական ազատութեան պայմանները՝ մենք մեր պարտքն ենք համարում նշանակել այստեղ այդ միջոցները:

1) Մշտական ներկայացուցչութիւն՝ Օրէնսդիր ժողով, որ կ'ընտրուի ազատ կերպով, ժողովրդային ընդհանուր եւ ուղղակի քուէարկութեամբ, պատուէրներով հանդերձ քուէարկողների կողմից եւ որ կ'ունենայ լիակատար իրաւունք ազգային կառավարչական բոլոր հարցերում:

ա. Ժողովրդական ներկայացուցիչներ կարող են ընտրուել ամէն, դասակարգերից:

բ. Օրէնսդիր ժողովի տեղը պիտի լինի Հայաստանի նշանաւոր քաղաքներից մէկը:

2) Նահանգական ընդարձակ իմնաբազմութիւն:

3) Համայնական ընդարձակ ինքնավարութիւն:

ա. Հասարակական ամենայն պաշտօն հաստատուում է ժողովրդական ընտրութեամբ:

4) Ընտրութեան իրաւունք ունի ամէն անձ՝ առանց խտրութեան նրա ունեցած հասարակական դիրքի, կարողութեան եւ պարապմունքի:

5) Մամուլի, խղճի, խօսքի, գումարման, ընկերութիւնների եւ ընտրողական ազդեցիկ լիակատար ազատութիւն:

6) Ամէն անձ ու բնակարան անձնունմիւն լինի:

7) Համայն ժողովրդի գինուորագրութիւն:

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդի տնտեսական դրութեան բարենորոգումների մասին, որ պիտի իրագործուի քաղաքական ազատութիւն հաստատելուց յետոյ, մենք առ այժմ կ'ասենք հետեւեալը.

Քննութիւն՝ ամբողջ ժողովրդի տնտեսական կեանքի պայմանների եւ կերպարանափոխելու կանոնաւորել նրանց նոյն ժողովրդի ձգտումների, պահանջների ու կարիքի համեմատ:

Այսուամենայնիւ հարկաւոր ենք համարում նշանակել այստեղ՝ ժողովրդային կեանքի այդ ճիւղում իրագործուի հետեւեալ հիմնաւոր պայմանը. Հարկային առաջադիմող (բրկրեսիւ) սխտեմ՝ սկսած որոշ կարողութիւնից վեր:

Նմանապէս հարկաւոր ենք համարում նշանակել այստեղ ժողովրդային կրթութեան վերաբերութեամբ հետեւեալ պայմանը. Պարտաւորեցուցիչ կրթութեան սխտեմ ամէնքի համար:

Վերջիչեալ նպատակների հասնելու միջոցն է՝ յեղափոխութիւնը, այսինքն՝ պէտք է բռնի կերպով կերպարանափոխել, յեղաշրջել ներկայ հասարակական կազմակերպութիւնը Թուրքաց Հայաստանում, գործ դնելով ժողովրդային: ապստամբութիւնը:

Յեղափոխական-ապստամբական գործընթացներն ասպարէզն է Թուրքաց Հայաստանը:

Այդ գործունէութիւնը ամփոփում է հետեւեալ կէտերում .-

1.- ՓՐՈՓԱԿԱՆՏԱ

Փրոփականտայի նպատակն է ժողովրդի ու հասարակութեան ամէն շրջաններում արծարծել ու տարածել յեղափոխութեան գլխաւոր գաղափարը՝ ազգային անկախութեան եւ ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութեան անհրաժեշտութիւնը, սոցիալական ռեֆորմներ, բարենորոգումներ գործադրելու համար:

Հիմնապատճառների՝ ժողովրդի ներկայ դրութեան պայմանների մասին. մեկնաբանութիւն՝ յեղափոխութիւն ու ապստամբութիւն անելու կերպերի ու եղանակների մասին, լուսաբանութիւն՝ յաջող յեղափոխութեան յաշտարակական պայմանների նշանակութեան մասին: Ծրագրի քաղաքական ազատութեան վերոյիշած կէտերի հիման վրայ ու սկզբունքների համեմատ՝ պէտք է արծարծել ու տարածել այդ կէտերն ու սկզբունքները:

2.- ԱԳԻՏԱՅԻԱ

Ազդեցիկայի նպատակն է վերականգնել ժողովրդի ինկած ոգին, գրգռել նրան թշնամու դէմ՝ օգուտ քաղելով սրա ամէն մի ճնշումից. գրգռել նրան կառավարութեան եւ ուրիշ թշնամիների աչքի ընկնող բռնութեան, հալածման դէմ: Հարստահարութիւնների ժամանակ ընդդիմադրել, գրգռել ժողովրդին՝ բռնակալ դրութեան դէմ. ամէն յարմար առիթով պահանջել կա-

Փարամազ եւ «Քսան Կախաղան» «20 Նահատակ»ի Լոյսի Տակ Յունիսներ

[...1915ի Հայկական Յեղասպանութիւնը ո՛չ թէ միայն Փոքր Ասիոյ աշխարհագրութեան բնիկ մէկ ժողովուրդի մեծամասնութիւնը ոչնչացուց, այլ նաեւ՝ (ինչպէս յայտնի է Փարամազի եւ անոր տասնինը գաղափարակիցի ոճրագործութեան մէջ) մեծամասնութեամբ ոչնչացուց թուրքիոյ մէջ այդ ժամանակաշրջանի ընկերակարակա՛ն շարժումը:]



Siyasihaber'e destek ol!

Paramaz ve "K'san kahagan", 20 Şehit'in, Işığında Haziran'lar*

Toros KORKMAZ yazdı: "1915 Ermeni Soykırımı, sadece Anadolu coğrafyasının önemli kadim halklarından olan Ermenileri büyük oranda yok etmekle kalmamış, Paramaz ve on dokuz yoldaşının kıymında görüldüğü gibi Türkiye sosyalist hareketinin o dönem için büyük oranda yok olmasına neden olmuştur."

15 Haziran 2022 08:56



ՅԵՂԻՆԱԿ՝ ԹՈՐՈՍ ՔՈՐՔԱԶ

Յիւրիխի համալսարանի ուսումնասիրող, հեղինակ Թորոս Քորքմազը հետեւեալ յօդուածը գրի առաւ Հայ յեղափոխական Փարամազի եւ անոր 19 գաղափարակիցի 15 Յունիս 1915 թուականին Պոլսոյ Պայազըթի հրապարակի վրայ սպանութեան 107ամեակի առթիւ:

Յօդուածը Թրքերէն լեզուով լոյս տեսած է "Siyasi Haber" կայքէջին վրայ. Հայերէնի թարգմանութիւնը՝ Նորայր Տատուրեանի:


«Մեր ուզածը հաւասարութիւն է: Մենք մոլեռանդ ազգայիններ չենք: Մենք կը պահանջենք, թէ Հայը, Թուրքը, Քիւրտը, Լազը, Եզդիտին, Ասորին, Արաբը եւ Ղպտին հաւասար պայմաններու մէջ ապրին: Որպէս յեղափոխական մը, կը հաւատամ, թէ այս նպատակին պիտի հասնինք: Սակայն, Օսմանեան կայսրութեան կեցուածքը ինքզինք Թուրք ազգայնականութեան կը տանի: Դարեր առաջ այս հողերու վրայ ձեր ունեցած կէտին՝ Թուրք ազգայնականութեան կը վերադառնաք: [...] Մենք ազգայնամոլներ չենք: Մենք կ'առաջնորդուինք ազգի ջանքերով: Մենք մոլեռանդ ազգայիններ չենք, ազգերու բարեկամներ ենք: Այո, մենք յեղափոխականներ ենք, զարգացած աշխարհին ծանօթ յեղափոխականներ ենք, օրինակելի յեղափոխականներ: Եւ Օսմանեան կայսրութիւնը քաջ գիտէ այն պարագաները, թէ մենք ինչո՛ւ պատմութեան բեմի վրայ ենք»:

Այս խօսքերը կը պատկանին իր 19 գաղափարակիցներու հետ կախաղան հանուած, Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան կարեւորագոյն ղեկավարներէն՝ «Փարամազ» Մատթէոս Սարգիսեանին: Հակառակ անոր, որ անոնց կախաղան հանուելուն վրայն անցած է 107 տարի, այս խօսքերը դեռ ընթացիկ կը մնան թուրքական քաղաքականութեան մէջ: Ժողովրդավարական իրաւունքները եւ ազատութիւնները բացակայութիւնը կը շարունակէ ճնշել գլխաւորապէս Քիւրտերը, որոնք կը մերժեն միօրինականաց-

նող թրքական ինքնութիւնը, ինչպէս նաեւ երկրի բոլոր այլ ազգերը: Մէկ այլ կարեւոր կէտը այն է, թէ յանձն Փարամազի՝ Հայկական յեղափոխական քաղաքականութիւնը ապագայի որքա՛ն ճշգրիտ կանխատեսում ունէր: Փարամազը կը նկատէ, թէ բազմաազգ Օսմանեան կայսրութեան գաղափարախօսութիւնը կը շեղի դէպի Թուրքական ազգայնականութեան, եւ որպէս լուծում, Հայկական ազգայնականութեան փոխարէն կը շեշտէ կայսրութեան մէջ բնակող բոլոր ազգերու եղբայրութիւնը, ու այս գաղափարը կ'առնէր Զախակողմեան Ա. Միջազգայինի պաշարի հետ: Փարամազը կը նկատէր, թէ ձուլում հետապնդող թրքական ազգայնականութիւնը կը գործնաչափ: Այդ հետապնդումը երկրի մէջ գոյութիւն ունեցաւ ո՛չ թէ միայն 1915ին եւ զայն հետեւող քանի մը տարիներու ընթացքին, այլ նաեւ ապագայ տարիներուն: Զուլիչ թրքական ազգայնականութիւնը Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիր գաղափարախօսութիւնն է, եւ որպէս անոր պաշտօնական պետական գաղափարախօսութեան կարեւորագոյն բաղադրիչը՝ թէ պետական եւ թէ ընկերային մակարդակի վրայ իր գերիշխանութիւնը կը շարունակէ մինչեւ այսօր: Այս վիճակը պատճառ եղաւ, որ Թուրքիոյ մէջ չզարգանայ ժողովրդավարական քաղաքական մշակոյթ մը:

Թուրքիոյ մէջ պաշտօնական պետական քաղափարախօսութիւնը եւ մայր-հոսանք քաղաքականութիւնները կը մերժեն 1915ի Հայկական յեղասպանութիւնը, հայերու պատմական բոլոր ջարդերը եւ անոնց ենթարկուած խտրականութիւնները: Սակայն, վերջին տարիներուն ժողովրդական, ձախակողմեան եւ ընկերակարական շրջանակներու մէջ նախկինները ընթուկեցութիւն կը գտնեն եւ այդ ուղղութեամբ աշխատասիրութիւններ ալ կը կատարուին: Այդ աշխատասիրութիւններու շղթայի մէջ սակայն կը բացակայի հետեւեալ օղակը. Թուրքիոյ ձախակողմեան պատմութեան եւ գաղափարախօսութեան կազմաւորման ուղղակի կապը Հայկական յեղասպանութեան

հետ: Մինչեւ Քատիր Աքընի 2015 եւ 2021 թուականներուն լոյս տեսած երկու գիրքերու հրատարակութիւնը*, այս նիւթի շուրջ նշմարելի աշխատասիրութիւն մը չէ կատարուած եւ ձախակողմեան շրջանակներու մէջ քննարկումներ տեղի չեն ունեցած: Այս հանգամանքը ցոյց կու տայ, թէ ի՞նչ է թրքական ձախակողմեան մտածողութեան ընդհանուր կեցուածքը:




Թրքական ձախակողմեան շարժման բոլոր ճիւղաւորումները կը համաձայնին մէկ կէտի վրայ, թէ այս աշխարհագրութեան մէջ ընկերակարութեան պատմութիւնը կը սկսի 1909 թուականին Օսմանեան Ընկերակարական կուսակցութեան հիմնադրութեամբ եւ անոր հետ նոյնացած անուններու հետ, ինչպէս Հիւսէյին Հիւմին եւ Մուսթաֆա Սուփիհին: Բազմաթիւ ձախակողմեաններ, որպէսզի տարբերուին քեմալիսթներէն՝ կ'ըսեն հետեւեալը. «Մեր Մուսթաֆան՝ Մուսթաֆա Քէմալը չէ, այլ՝ Մուսթաֆա Սուփիհին»: Մինչդեռ աչքէն կը վրիպի կարեւոր կէտ մը. այդ ժամանակաշրջանի միջազգային ընկերակարական շարժումը չէր կարեւորեր Օսմանեան Ընկերակարական կուսակցութիւնը, ոչ ալ՝ այդ կառուցի ղեկավար անունները: Անոնք քաղափարախօսական եւ տեսական լուրջ ունակութիւններէ զուրկ, քաղաքական փորձառութիւնները անբաւարար դերակատարներ էին: Այդ դերակատարները, հակառակ իրենց անուանական նշանակութեան, Թուրքիոյ մէջ ընկերակարութեան տեսական կամ գործնական նպաստ մըն ալ չեն բերած: Մինչդեռ, նոյն ժամանակաշրջանի Հայկական յեղափոխական քաղաքական շարժումը, իր երեք տասնամեակի անցեալով, գաղափարախօսական եւ տեսական գիտնականութեամբ, միեւնոյն ժամանակ Օսմանեան կայսրութեան մէջ իր ունեցած կազմակերպչական մակարդակով եւ Միջազգայինի հետ ունեցած կապերով արժանի է կոչուելու որպէս Թուրքիոյ ընկերակարութեան պատմութեան հիմնադիրը: Օրինակ, 1917ին Սպիտակ Բանակի դէմ յաղթանակած Լենինը իր ճառի մէջ կ'ըսէր՝ «Դեռ երէկ, 15 Յունիս 1915 թուականին, եղբայրս, ուղեկիցս Փարամազը, իր տասնինը մտաւորական ընկերակարական ուղեկիցներուն հետ, Պոլսոյ Պայազըթի հրապարակի վրայ կախաղան հանուեցաւ»: Լենինը յանձն Փարամազի՝ կ'ողջունէր Հայկական ընկերակարական շարժումը:

1887ին հիմնուած Յեղափոխական Հնչակեան կուսակցութիւնը եւ 1890 թուականին հիմնուած Դաշնակցական կուսակցութիւնը թէ՛ անդամն էին այդ ժամանակաշր-

ջանի կարեւորագոյն միջազգային ձախակողմեան կազմակերպութեան՝ Բ. Միջազգայինին, եւ թէ՛ իրենց ծրագիրներուն մէջ լայն տեղ կը տրամադրէին ժամանակաշրջանի գաղափարային եւ տեսական ընթացիկ վիճաբանութիւններուն: Հնչակեան կուսակցութիւնը ո՛չ թէ միայն ուղղակիօրէն կ'ակնարկէր Քառը Մարքսին, այլ նաեւ՝ անոր հիմնադիր խաւը կը հաղորդուէր մարքսիստ յեղափոխական առաջնորդներու՝ Էնկէլսի, Փլէխանովի եւ Լենինի հետ: Դաշնակցութիւնը, աւելի ազգայնական ըլլալով հանդերձ քան Հնչակեանները, եւ իր մէջ պարունակելով նաեւ քաղքենի «պուրժուա» տարրեր, բանուորական դասակարգին եւ գիւղացիներու շահագործումը թէ՛ իր ծրագրին եւ թէ՛ քաղաքական գործունէութիւններու մէջ հրապարակող ձախակողմեան գանգուածային կուսակցութիւն մըն էր: Այս իրականութիւնները Օսմանեան աշխարհագրութեան մէջ հայերու ենթարկուած խտրականութիւնը բացայայտէին կ'արտայայտէին եւ անոր ընդդէմ մինչեւ ինքնավարութեան հասնող պահանջներ կը ներկայացնէին՝ - չի նշանակել, թէ այդ կուսակցութիւնները անջատողական հայ ազգայնականներ էին, ինչպէս կը պնդէ [Թուրքական] պաշտօնական պատմագրութիւնը, այլ ան ցոյց կու տայ, թէ երկու կուսակցութիւններն ալ ազգային հարցը ընկերակարութեան մէջ ձուլող ընկերակարական կուսակցութիւններ են: Նոյն ժամանակաշրջանի Օսմանեան Ընկերակարական կուսակցութիւնը, մինչդեռ, յիշուած հարցերուն տեղ չէր տրամադրեր իր ծրագրին մէջ, հակառակ անոր, որ ակնյայտ էր կայսրութեան մէջ քրիստոնէական հպատակներու ենթարկուած խտրականութիւնը: Թուրքիոյ Համայնավար կուսակցութիւնը, որ հիմնուած էր Մուսթաֆա Սուփիհի կողմէ եւ հանրապետութեան առաջին տարիներէն մինչեւ 60ականներ ձախակողմեան ընկերակարութեան ամենաազդեցիկ կազմակերպութիւնն էր, Հայկական յեղասպանութիւնը (եւ ոչ-Թուրք այլ ազգերու հարցերը) օրակարգի վրայ չէր բերեր, աւելին՝ իր շարքերու մէջ վարչական աստիճանի հասած հայերու ինքնութիւնը ծածկելով անոնց թրքական ծածկանուններ կու տար:

1915ի Հայկական Յեղասպանութիւնը ո՛չ թէ միայն Փոքր Ասիոյ աշխարհագրութեան բնիկ մէկ ժողովուրդի մեծամասնութիւնը ոչնչացուց, այլ նաեւ՝ (ինչպէս յայտնի է Փարամազի եւ անոր տասնինը գաղափարակիցի ոճրագործութեան մէջ) մեծամասնութեամբ ոչնչացուց Թուրքիոյ մէջ այդ ժամանակաշրջանի ընկերակարական շարժումը: Երբ ընկերակարական քաղափարային եւ քաղաքական ձեռքբերումները կ'անհետանային, իր վերջակէտին կը հասնէր նաեւ ժողովուրդներու միջեւ ընդհանուր քաղաքականութիւն մը վարելու մշակոյթը: Երբ աչքի առջեւ առնենք, թէ ընկերակարական շարքերու կազմութիւնը եւ տեսական հասունութիւնը երկար տարիներ պահանջող ընթացք մըն է, ապա կ'ըմբռնենք, թէ որքա՛ն մեծ է կորուստը: Այս վիճակը Թուրքիոյ ձախակողմեան շարժման (բացի Թուրքիոյ հանրապետութեան հիմնադրութենէն) պատճառեց երկու վնաս. ընկերակարա-

Պուշկինի Այգին Ընկերային Հաւաքատեղի (Երիտասարդ Տարիների Յուշեր)



ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Այսօր էլ կայ այդ այգին, սակայն անունը փոխել, դարձրել են «Սիրահարների այգի»: Այն իմ պատանեկութեան տարիների ընկերային, մաքուր, անբիծ փոխյարաբերութիւններ հիմնելու արկածների, սիրահարութեան, առաջին համբույրի լուռ վկան է այդ այգին: Երբեմնի սաղարթախիտ ծառերով հարուստ այգում քիչ ծառեր են մնացել: Բարեկարգման նպատակով բազմաթիւ ծառեր են արմատախիլ արուել: Տարիներ առաջ, անցեալ դարի 50-ականներին այնքան խիտ էր այգին, որ դժուար էր այգուց Բաղրամեան (այսօր՝ Բարեկամութեան) փողոցի մարդկանց անցուղարձը տեսնել: Բաւական դիւրին էր աչքից հեռու, այգու մի հեռաւոր անկիւնում նստել նստարանին ու թաղուել այս կամ այն հետաքրքիր գրքի էջերի մէջ:

Պուշկինի այգին իմ ընկերընկերուհիների հաւաքատեղին էր: Այստեղ էինք քննարկումներ անում, կարծիքներ փոխանակում այս կամ այն գրքի, համերգի, կամ կինոնկարի մասին: Մէկ միւսին հաղորդակից դարձնում մեր ուրախութիւնների, անպատասխան սիրոյ եւ այլ հարցերի մասին:

Ամէն ինչ մաքուր էր, անկեղծ: Այգու ետեւում կային մի քանի հայրենադարձների տներ: Դրանց բնակիչների հանգստի մշտական վայրն էր Պուշկինի այգին: Մենք, երեք ընկերներ (ես, Ժիրայր Թորոսեան, Յարութիւն Գրքաշարեան) ամառուայ երկու-երեք ամիսն անցկացնում էինք «մեր» այգում: Մշտապէս մեզ էր միանում իմ ընկերուհի, մեր դրացի Լիլիթը: Վերի սեփական տներից մէկում էր ապրում Բէյրութում ծնունդ առնող մի քանի զաւակով հագնուած, հազրկապը տեղին, ինձնից մի քանի տարով մեծ Ջաւէն Շլուզեանը, որը շատ կարճ ժամանակ յետոյ միացաւ մեր խմբին:

Դրամ հայթայթելու արուեստի մէջ բաւական ճարպիկ էր Ջաւէնը, որը տան միակ արուզաւակը լինելու հանգամանք օգտագործելով, կարողանում էր փող «պոկել» լաւ դրամ վաստակող հօրից, որը նշանաւոր դերձակ-ձեւարար էր եւ կարում էր Հայաստանի երգի-պարի պետական համոյթի հազուատները:

Յարութիւնի վիճակն էլ վատ չէր: Նրա հայրը այդ տարիների լաւագոյն ատամնատեխնիկներից մէկն էր: Գրքաշարեանների նիւ-

թական բարեկեցիկ կեանքի շնորհիւ էր, որ Յարութիւնը սովորում էր երաժշտական դպրոցում, մի բան, որ ինձ համար երազ էր շատ փոքր տարիքից:

Իմ սիրելի Ժիրայրի եւ իմ նիւթական վիճակը նոյնն էր: Նրա հայրը ֆրանսերէնի ուսուցիչ՝ ծայրը-ծայրին հազիւ էր հասցնում: Գրեթէ նոյն վիճակն էր մեր ընտանիքում:

1953-54 ուսումնական տարուայ նախօրերին, ամբողջ ամառն անցկացրինք այգում: Ստալինի մահից յետոյ փոքր ինչ լուսաւոր էր դարձել կեանքը: Մեր «հզոր խմբակի» «գործունէութիւնը» հիմնականում ծաւալուում էր գրոյցների, շախմատ եւ այլ խաղեր իրականացնելու մէջ, սակայն խօսակցութիւնների հիմնական թեման պտտում էր մեր հետագայ պլանների, անկիւնների շուրջ: Ամէն մէկն ունէր իր նախասիրութիւնը, իր երազը:

Տղաներն արդէն որոշել էին բարձրագոյն ուսում ստանալ Պետական համալսարանում: Ինձ հարցնող չկար, թէ որտեղ եմ ուզում շարունակել ուսումս: Նրանք գիտէին երաժիշտ դառնալու երազանքիս մասին, որն ըստ իրենց, անիրականանալի երազ էր:

Իսկ ես, եթէ որեւէ երեկոյի նրանց հետ չէի, ասել էի Ֆիլհարմոնիայում էի, որեւէ սիմֆոնիկ համերգի, ուր, շատ անգամ բարձրանում էի սրահի ամէնավերին օթեակ, որը սովորաբար դատարկ էր լինում, եւ կանգնելով վարագոյրի ետեւում, փորձում էի դիրիժոր Միքայէլ Մալունցեանին նայելու՝ ինքս էի ինձ ու ինձ դեկավարում:

Մինչ նման «դիրիժորութիւն» անելը, ես դասական երաժշտութիւն էի ամբարել իմ ուղեղում՝ շնորհիւ եղբորս, որը 1952-ին Լենինգրադից բերել էր դասական երաժշտութեան ձայնապնակներ եւ նոյնիսկ՝ սիմֆոնիկ պարտիտուրներ: Նոտաճանաչ չլինելով, տեսողութեամբ, լատինական նշանների օգնութեամբ, նոտաների վեր ու վար ընթացքով, ես ճշգրտօրէն կարողանում էի հետեւել երաժշտութեան ընթացքին: Ես արդէն անգիր էի արել դասական երաժշտութեան մի քանի հանրամատչելի սիմֆոնիկ ստեղծագործութիւններ:

Իմ ազատ օրերին սկսել էի նոյնիսկ նուագախմբի փորձերին

գնալ: Ջարմանալիօրէն բոլոր երաժիշտները բարեացակամ էին իմ նկատմամբ Այդ վերաբերմունքի շնորհիւ էր, որ ես համարձակութիւն ունեցայ գնալ բեմի ետեւը եւ մօտիկից շփուել երաժիշտների եւ նոյնիսկ դիրիժոր Միքայէլ Մալունցեանի հետ:

Այդ նոյն ժամանակ Պուշկինի այգում, իմ բացակայութեան ժամանակ տղաները իմ «ապագան» էին քննարկում: Ու մի օր, նուագախմբի փորձից յետոյ եկայ այգի: Դեռ հեռուից նկատեցի, որ տղաները վիճում են: Ինձ տեսնելուն պէս՝ պապանձուեցին:

- Հը՛, ի՞նչ կայ տղերք... ինչո՞ւ լուեցիք: Ինչո՞ւ մասին էիք վիճում,- հարցրի ես:

- Ոչի՛նչ, հենց այնպէս... խօսելու բան չկա՞յ, Հենրիկ,- Լիլիթն էր, որ մշտապէս գիտէր իմ ուր լինելը:

- Եթէ այդպէս յանկարծակի դադարեցրիք խօսակցութիւնը, կը նշանակի իմ մասին էիք խօսում, ինձ էիք բամբասում:

- Տօ հա՛, , հենց քո մասին էինք խօսում,- համալսարանի ուսանող Ջաւէնն էր:

- Հենրիկ, շուտով աւարտելու ես դպրոցը եւ դեռ չես որոշել, թէ որտեղ ես սովորելու, ո՞րտեղ ես ուսումը շարունակելու,- սա էլ Ժիրայրն էր, որ յաջորդ տարի էր աւարտելու դպրոցը:

- Տղե՛ք, դուք լաւ գիտէք իմ նախասիրութիւնը, իմ երազանքը, ես ոչ մի տեղ էլ չեմ ուզում սովորել, ինձ հանգիստ թողէք:

- Հենրիկ, այս դու երազի մէջ ես, մոռացիր, մոռացիր երաժշտութիւնը: Դու հիանալի գրիչ ունես: Գրուածքներդ էլ արդէն սիրով ընդունում են հասարակութեան կողմից: Քեզ համար բաւական հեշտ կը լինի բանասիրական ընդունելը,- ասաց Ջաւէնը:

- Թողէք մի բան էլ ես ասեմ,- ասաց Լիլիթը,- լաւ, լա՛ւ Հենրիկ, այս տարի որեւէ տեղ մի դիմիր, գնայ, հետաքրքրուիր երաժշտական դպրոցներով, գուցէ թէ մի բան ստացուի, ի՞նչ իմանամ: Էս տարին քոնն է, ինչ ուզում ես արա՛:

Հազիւ մէկ շաբաթ անց, հետեւեալ գրոյցը տեղի ունեցաւ իմ ընկերների հետ՝ դարձեալ Պուշկինի այգում: Ջաւէնն էր գրոյցն սկսողը

- Հենրիկ, դու պէտք է ընդունուես որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն: Դու ստիպուած ես մոռանալ երաժշտութիւնը:

- Չեմ հասկանում... դուք չէիք որ անցեալ օրը յոյս էիք տալիս թէ թէրեւս կը կարողանամ ուղիներ գտնել երաժշտութեամբ զբաղուելու համար: Այդ ի՞նչ պատահեց, որ մի քանի օրուայ մէջ փոխեցիք ձեր կարծիքը:

- Թող Լիլիթը պատմի, նա էր գաղափարի հեղինակը,- ասաց սրտնեղած Ջաւէնը:

- Ինչ ասեմ Հենրիկ, ես, Ժիրայրը եւ Ջաւէնը գնացինք ֆիլհարմոնիա՝ դիրիժոր Միքայէլ Մալունցեանի հետ գրուցելու: Փորձեցինք ճշդել, թէ հնարաւոր է 17 տարեկանից երաժշտութիւն սովորել հետագայում դիրիժոր դառնալու համար:

- Եւ ինչ, ի՞նչ ասաց Մալունցեանը:

- Ես կարճ կ'ասեմ Հենրիկ: Մոռացիր երաժշտութիւնը: Մահատրոն ասաց, որ կարող ես երաժիշտ դառնալ, որեւէ փողային գործիք նուագել սովորել,

ասենք կլարնետ, բայց դիրիժոր՝ դժուար թէ, էն էլ՝ սկսելով գերօչից - եզրափակեց գրոյցը Ջաւէնը:

Առանց մի խօսք ասելու, շուտով վիճակում թողնելով ընկերներին, հեռացայ այգուց:

Անբացատրելի յուսահատութիւն էր պատել ինձ: Ի՞նչ անել, ի՞նչպէս դասաւորել իմ յետագայ կեանքը, ի՞նչ մասնագիտութիւն ընտրել: Իմ սրտին մօտ էր գրականութիւնը: Եղբայրս՝ Արսէնը հաւասարապէս կիսում էր իմ տառապանքի ծանրութիւնը:

- Հենրիկ,- ասաց նա,- ի՞նչ արած, միշտ չէ, որ կեանքը դասաւորուում է ուզածիդ պէս, ես էլ կ'ուզէի քեզ տեսնել դիրիժորական վահանակի առջեւ: Ես մշտապէս հետեւել եմ թէ դու ինչպէս ես գիշեր-ցերեկ տարուած դասական երաժշտութեամբ: Մեր ծնողները ժամանակին հնարաւորութիւն չունեցան քեզ երաժշտական դպրոց ուղարկել: Մենք շատ ազբատ էինք, հացի դրամ իսկ չունէինք: Դու հիանալի գրիչ ունես, կարող ես լաւ լրագրող լինել, ինչո՞ւ, չէ՛ նաեւ գրող: Շուտով աւարտում ես միջնակարգը: Արագ կողմնորոշուիր:

1954-ին աւարտեցի Արաբկիրի Շիրվանզադէի անուան դպրոցը: Այդ ամռանը Պուշկինի այգին աւելի մարդաշատ էր դժուարացել էր երկու-երեք ազատ նստարան գտնելը, որպէսզի ոլորակ կազմած մեր խումբը իրար գլխի հաւաքուէր ու մինչեւ մութն ընկնելը օրը գրոյցներով ու խաղերով անցկացնելը հաճելի լինէր: Մեր թեմաներից վերջնականապէս դուրս մղուեց իմ երաժիշտ դառնալ-չդառնալու հարցը:

Մալունցեանի «մարգարէական» կանխորոշումն էլ աւելի էր բորբոքել իմ երաժիշտ դառնալու երազանքը, կիրքը՝ եթէ կ'ուզէք: Յանկացած գնով պատրաստ էի հակառակը ապացուցել: Ես մտադրուել էի «վրէժ» լուծել բոլորից: Բայց չգիտէի ինչից սկսել: Ես խորհրդատու անգամ չունէի, քաշուում, ամաչում էի որեւէ մէկից խորհուրդ հարցնել:

- Հենրիկ, ի՞նչ ես մտածում, Օգոստոսը գալիս է, իսկ դու դեռ որոշում չես կայացրել, որեւէ տեղ ընդունուելու համար,- ահնայատ մտահոգութեամբ մի օր ասաց Լիլիթը:

- Ես դեռ որոշումների մէջ եմ եւ չգիտեմ անելիքս: Դու կարող ես հասկանալ, որ ինձ ոչ մի մասնագիտութիւն չի ձգում, չի գրաւում:

- Հասկանում եմ Հենրիկ, այնուհանդերձ՝ մտածիր, եթէ դու մօտակայ երկու շաբաթուայ ընթացքում գործերդ որեւէ տեղ չյանձնես՝ տարի ես կորցնելու:

- Է՛... թող կորցնեմ, առանց այն էլ՝ կորցրել եմ... ի՞նչ դառնամ՝ բժիշկ, փաստաբա՞ն: Ոչ մէկն էլ սրտովս չի: Միակ մասնագիտութիւնը, որ քիչ թէ շատ սրտիս մօտ է՝ լրագրող, գրող դառնալն է:

- Տեսնո՞ւմ ես, հայրիկդ էլ է այդպէս մտածում: Նա շատ հեռատես մարդ է:

- Չգիտեմ, չգիտեմ անելիքս: Հաւանաբար ես այս տարի բաց կը թողնեմ, կը գնամ մի տեղ կ'աշխատեմ, ինչ աշխատանք ուզում է լինի: Ինչպէս ասում են՝ գուցէ թէ «խելքի գամ» ու մի տեղ կը մտնեմ սովորելու:

Ամերիկա եւ Ամերիկահայը (Ամերիկայի Անկախութեան Տօնին Առթիւ)



ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻՎԵԱՆ

Ամէն տարի, Յուլիս 4-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգները կը տօնէ իր ծննդեան տարեդարձը, իր անկախութեան տօնը: 1776-ի Յուլիս 4-ի այդ օրը, Բրիտանական կայսրութեան պատկանող 13 նահանգներ ստորագրեցին կարեւոր պաշտօնաթուղթ մը եւ իրենց անկախութիւնը հռչակեցին: Այդ պաշտօնաթուղթը կը կոչուի Անկախութեան Յայտարարութիւն (The Declaration of Independence): Այդ 13 նահանգներու ներկայացուցիչները արար աշխարհի կը յայտարարէին թէ՛ իրենք իրենց կապերը իզգած էին Անգլիոյ հետ եւ այլեւս ազատ եւ անկախ պետութիւն էին:

Այսպէս սկսաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ծնունդը: Բայց ազատութեան գաղափարաբանութիւնն ու երազը աւելի կանուխ ծնունդ առաւ երբ Պանդուխտ Հայրեր՝ (Pilgrim Fathers) 1620-ական թուականներուն Ադլանտեան Ովկիանոսի այս ափերուն ոտք կը դնէին՝ փախչելով Անգլիոյ մէջ իրենց դիմագրաւած կրօնական հալածանքներէն: Ամերիկայի յետնորդ սերունդները այդ գաղափարաբանութեան եւ երազին ժառանգորդներն են:

Ի՞նչ էր այդ գաղափարաբանութիւնը:

1. Առաջին. Այդ գաղափարաբանութիւնը ազատութեան երազն էր: Պանդուխտ Հայրերը, եւ իրենցմէ 125 տարի ետք Անկախութեան Յայտարարութիւնը ստորագրող մեծանուն մարդիկը, կը տենչալին ունենալ այն ինչ որ բնականն եւ գիտակից ամէն մարդ կը ցանկայ ունենալ-ազատութիւն: Խղճի, կրօնքի եւ իսօքի ազատութիւնը, որ մղեց Պանդուխտ Հայրեր «Նոր Աշխարհ» գալու այնչափ կենսական էր անոնց համար որչափ իրենց ծծած օդն ու իրենց կերած կերակուրը: Այդ նոյն ոգիով էր, որ իրենց արժանաւոր յաջորդները 1776-ին իրենց ազատ անկախ կառավարութիւնը կը հռչակէին: Այնուհետեւ, իւրաքանչիւր սերունդ նոյն աւելնով անած եւ նոյն ոգիով տոգորուած՝ Ամերիկայի ազատութեան այդ երազը վառ պահած է:

Ամերիկան միայն հող եւ նիւթ չէ: Ամերիկան իտէալ է, ազատութեան, հաւասար պատեհութեան եւ մարդկային տարրական իրաւունքներու մարմնացումը, ուր տարբեր ազգերու, կրօնքներու եւ բարբերութեան պատկանող մարդիկ՝ նոյն դրոշի տակ կը միանան եւ կը դառնան նոր ազգ:

Ամերիկան ծնաւ որպէս արգասիք հոգեկան ու վսեմ երկունքի

մը: Ազատութեան սէրը մղեց այս երկրին հիմնադիրները հիմը դնելու այն հանրապետութեան որ պիտի կոչուէր Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Իր սկզբնածագ օրէն սկսեալ Ամերիկան դարձաւ՝ բռնակալութեան ճիրաններէն փախչող ամէն ազգի, գոյնի եւ գաղափարի մարդոց ապաստանարանը:

Թերեւս ոչ մէկ ժողովուրդ այնչափ գնահատած եւ վայելած է այդ ազատութիւնը որչափ թուրքին եւ թաղանձն մագապուրծ ազատած հայութիւնը, որ դարեր շարունակ ազատութիւն երազած է եւ ազատութեան համար ծով-արիւն թափած է: Հայկ Նահապետի օրերէն՝ մինչեւ Արտաշէս Աշխարհակալի, Մեծն Տիգրանի, Սասունցի Դաւիթի, Քաջն Վարդանի եւ հերոս Անդրանիկի օրերը ... Աւարայրներու եւ Սարտարապատներու փառքը կերտող հայութիւնը ամենէն աւելի գնահատած է ազատութիւնը:

Ամերիկահայուն երազն ալ յար եւ նման է Ամերիկայի ազատասէր մարտիկ Փէթրիք Հէյնրիի ազատասէնչ կոչին «Մահ կամ Ազատութիւն»:

2. Երկրորդ. Ամերիկայի գաղափարաբանութեան ուրիշ մէկ յատկանիշն է ճանչնալ իւրաքանչիւր անհատի արժէքը, դերն ու կարեւորութիւնը: Ամերիկան կը հաւատայ թէ՛ պետութիւնը ժողովուրդին, եւ զայն կազմող ամէն անհատի, բարօրութեան համար կը կենայ: Անոր ուսմակարական (democratic) վարչաձեւը բացայայտօրէն կը դաւանի թէ՛ ան ժողովուրդէն է, ժողովուրդին կողմէ եւ ժողովուրդին համար: Բայց երկրին իւրաքանչիւր քաղաքացին իր պարտականութեանց հետ՝ ունի նաեւ իր իրաւունքներն ու պատճառաւոր մտնելը: Այլ իսօքով, պետութիւնը ժողովուրդին համար է եւ ոչ թէ ժողովուրդը պետութեան համար: Այս մտասեւեռումը առիթ կ'ընծայէ անծայրածիր պատեհութիւններու անոնց, որոնք զարգանալու եւ յառաջդիմելու կամքն ու արժանիքը ունին: Յառաջդիմասիրութիւնը Ամերիկայի բարեմասնութիւններէն մին է: Իրաւ ամերիկացին ձգտումն ունի աւելի լաւը ընելու եւ ըլլալու:

Ոչ մէկ ազգութիւն այնչափ չէ գնահատած անհատ մարդու կարեւորութիւնը եւ անկէ բխող յառաջդիմասերական աշխարհահայեացքը որչափ ամերիկահայը, որովհետեւ երկար ատեն օտարութեան մէջ ապրող անդաստական հայը երբ Ամերիկա ապաստանած է՝ վայելած է քաղաքացիական պատկանելիութեան այն առանձնաշնորհումը, որ սակաւաթիւ երկիրներ կ'ընծայեն իրենց քաղաքացիներուն: Գուցէ այդ պատճառով է, որ

Ծի՞շո՞ք է թէ ... Երկար եւ Ուրախ Ապրելու Խորհուրդներ ... Առողջապահական Խորհուրդներ

Հարցում.- Բժիշկ, լսած եմ որ սրտամկանային մարզանքները կեանքը կ'երկարեն:

Պատասխան .- Սիրտը կրնայ միայն որոշ թիւով բաբախել կեանքի ընթացքին: Մարզանքի վրայ ժամանակ մի վատնէր: Ամէն բան վերջաւորութեան կը մաշի: Սրտի զարկերը առագացնելով երկար չէք ապրիր: Այս կը նմանի ըսելուն որ եթէ ինքնաշարժդ արագ գշես, կեանքը կ'երկարես: Կ'ուզես երկար ապրիլ՝ մըրափ մը առ:

Հարցում.- Ալքոհոլի գործածութիւնն ալ է՞նչ քիչ նուազեցնում:

Պատասխան.- Ո՛չ: Գինին պտուղով կը պատրաստեն: Պտուղը շատ օգտակար է: Պրէնտին գտուած գինի է, որ կը նշանակէ թէ ջուրը պտուղին մէջէն գտած են, եւ հետեւաբար աւելի օգտակար է: Գարեջուրն ալ զարիէն պատրաստուած է, եւ զարին օգտակար է: Կենացը:

Հարցում.- Կանոնաւոր մարզանքի մասնակցելուն օգտակարութիւնները որո՞նք են:

Պատասխան.- Պատասխան մը չեմ կրնար գտնել: Ոչ ցաւ - շատ լաւ:

Հարցում.- Տապկուած ուտելիքները գէ՞շ են:

Պատասխան.- Բուսական իւղի մէջ տապկուած ուտելիքը ինչպէ՞ս գէշ կրնայ ըլլալ: Բուսականութիւնն գէ՞շ է:

Հարցում.- Շոքոլան (տուրմ) վնասակար է:

Պատասխան.- Խե՞նդ ես: Քոքոնայի ոլորնը նոյնպէս բոյս է: Տրամադրութիւնները բարձրացնող ուտելիք է, եւ օգտակար է:

Հարցում.- Լողալը մարմնիդ ձեւին համար լա՞ւ է:

Պատասխան.- Եթէ լողալը լաւ է, ինչպէ՞ս կը բացատրես կէտ ձուկի մարմինը :

Ճաբոնացի բժիշկի մը հեղինակաւոր կարծիքները՝ հիմնուած փաստերու վրայ:

1.- Նայէ բարեկամ, կեանքը դէպի գերեզման ճամբորդութիւն մը չէ ուր պէտք է ապահով, լաւ կազմուած եւ գրաւիչ մարմնով հասնիս: Լաւ է որ հոն սահիս մէկ ձեռքդ գարեջուր միւսին ալ շոգոլայ բռնած, մաշած մարմնով՝ բայց ուրախ

2.- Կեր ի՞նչ որ կ'ուզես որովհետեւ պիտի մեռնիս: Մնադազտներուն քարոզներուն շատ մի հաւատար:

Յ Treadmill (վազքի մեքենայ) ստեղծողը 54 տարեկանին մահացաւ:

Մարմնամարզական ակումբները (gymnastics) ստեղծող մարդը 57 տարեկանին մահացաւ:

Աշխարհի մարմնամարզի (bodybuilding) ախոյեանը 41 տարեկանին մեռաւ:

Աշխարհի լաւագոյն ֆութպոլիստը, Մարատօնան, 60 տարեկանին մեռաւ:

- Անդին՝
- KFC (տապկուած հաւ) ստեղծիչը 94 տարի ապրեցաւ:
- Նութէլլա շոգոլան ստեղծողը 88 տարի ապրեցաւ:
- Սիկարէթի Ուինսթըն տեսակի ստեղծողը 102 տարի ապրեցաւ:
- Օփիումի ստեղծիչը 116 տարեկանին մահացաւ...երկրաշարժէն:
- Հէննէսի Գոնեսքի ստեղծիչը 98 տարի ապրեցաւ:

Նապաստակները միշտ վեր ու վար կը ցատկոտեն բայց միայն 2 տարի կ'ապրին, մինչ կրիաները որոնք երբէ՛ք մարզանք չեն ընէր՝ 400 տարի կ'ապրին:

Հետեւաբար, հանգստացիր, պաղարիւնութեամբ կեր, խմէ եւ կեանքը վայելէ:

Վերջաւորութեան, առողջ կամ տկար՝ պիտի մեռնիս: Համադրեց՝ Վ.Գ.

ամերիկահայ գաղութը հայ գաղութներու ամենէն բարգաւաճ հաւաքականութիւններէն մէկն է: Գիտակից ամերիկահայը իրազեկ է այն իրողութեան, որ Ամերիկան անասնաշնորհմամբ: Այլ իսօքով, պետութիւնը ժողովուրդին համար է եւ ոչ թէ ժողովուրդը պետութեան համար: Այս մտասեւեռումը առիթ կ'ընծայէ անծայրածիր պատեհութիւններու անոնց, որոնք զարգանալու եւ յառաջդիմելու կամքն ու արժանիքը ունին: Յառաջդիմասիրութիւնը Ամերիկայի բարեմասնութիւններէն մին է: Իրաւ ամերիկացին ձգտումն ունի աւելի լաւը ընելու եւ ըլլալու:

Ոչ մէկ ազգութիւն այնչափ չէ գնահատած անհատ մարդու կարեւորութիւնը եւ անկէ բխող յառաջդիմասերական աշխարհահայեացքը որչափ ամերիկահայը, որովհետեւ երկար ատեն օտարութեան մէջ ապրող անդաստական հայը երբ Ամերիկա ապաստանած է՝ վայելած է քաղաքացիական պատկանելիութեան այն առանձնաշնորհումը, որ սակաւաթիւ երկիրներ կ'ընծայեն իրենց քաղաքացիներուն: Գուցէ այդ պատճառով է, որ

Համաձայնի երկրին նախագահին հետ: Այդ տարակարծութեան ետին կայ այն գիտակցութիւնը թէ՛ պետութիւնները գերագոյն հեղինակութիւններ չեն: Գերագոյն հեղինակութիւնը մարդկային զգայուն խղճմտանքն է: Մէկու մը խիղճն է վերաքննիչ ատեանը: Եթէ խիղճը կը հրահանգէ թէ՛ բան մը սխալ է, ան պէտք է անսայ խղճի ձայնին, ոչ թէ արտաքուստ, այլ ներքուստ հեղինակութեան:

Ամերիկահայը մեծապէս կը գնահատէ խղճի գերիշխանութիւնը: Ան իրազեկ է թէ՛ հայ ազգը խղճի ու գաղափարի ազատութեան համար պայքարած է եւ սուղ գին վճարած է. ան նոյնիսկ կեանքի գինով պաշտպանած է այդ սրբութիւնը:

Ամերիկան եւ Ամերիկահայը փոխադարձաբար հարստացած են իրարմէ եւ իրարմով: Ամերիկան եւ տուած է Ամերիկահայուն եւ ստացած Ամերիկահայուն, այն կարեւոր յատկանիշները, որոնք հասարակաց բարեմասնութիւններ են ամերիկացի եւ հայ ժողովուրդներուն համար:

Արեւելեան Ուղղափառ Եւ Կաթողիկէ Եկեղեցիներու Միջեւ Երկխօսութեան Խառն Յանձնախումբի Ժողովը



Յունիսի 20-էն 24-ը Հռոմի մէջ տեղի ունեցաւ Արեւելեան Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներու միջեւ երկխօսութեան խառն յանձնախումբի 18-րդ ժողովը, ուր ներկայ էին տարբեր երկիրներէն ժամանած Արեւելեան Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներու շուրջ 23 հոգեւորական: Հայ Առաքելական Եկեղեցոյ պատուիրակութիւնը բաղկացած էր չորս անդամներէ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն կը մասնակցէին՝ Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեան եւ Գերշ. Ս. Տիրան Եպս. Պետրոսեան, իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ Գերշ. Ս. Մակար Եպս. Ազգարեան եւ Հոգևոր Ս. Պողոս Վրդ. Թինքճեան:

նաւորուի «նոր քայլ դէպի լիարժէք հաղորդութիւն»: Սրբազան Քահանայապետը խօսեցաւ էջումենիզմի «մկրտական, հովուական եւ տեղական» նկարագրի մասին: «Մկրտութեան մէջ է քրիստոնեաներու միջեւ հաղորդակցութեան եւ ամբողջական տեսանկի միասնութեան տենչանքի հիմքը: Այս խորհուրդի շնորհիւ է, որ մենք կրնանք Պողոս Առաքելաւի հետ համատեղ հաստատել, որ մենք ամէնքս ալ մէկ Հոգիով մկրտուեցանք՝ մէկ մարմին ըլլալու համար», - ըսաւ Ֆրանչիսկոս Պապը: Հռոմի Պապը մաղթեց, որ Սուրբ Հոգին մեզ ներշնչէ համատեղ դէպի առաջ ընթանալու, ուղղորդուելով մարդոց հոգիներու ու



Յանձնախումբը միահամուռն դուռնեց «Խորհուրդները Եկեղեցոյ կեանքին մէջ» վերնագիրով նոր փաստաթուղթ: Հռոմի մէջ գումարուած նիստին սկսաւ նաեւ երկխօսութեան նոր փուլ՝ «Սուրբ Կոյս Մարիամը եկեղեցոյ ուսմունքին եւ կեանքին մէջ» թեմայով, ուր քննարկուեցան տարբեր աշխատութիւններ, մասնաւորապէս՝ Աստուածածինի վերափոխման վերաբերեալ: Յանձնախումբի յաջորդ նիստը պիտի կայանայ 2023 թուականի Յունուար 31-էն Փետրուար 4-ը, Եգիպտոսի Ուատի էլ-Նադրուն անապատի Սուրբ Պիշոյի վանքին մէջ: Յունիսի 23-ին, նիստի մասնակիցները հանդիպում ունեցան Ֆրանչիսկոս Պապին հետ: Ներկաներուն ուղղած իր ողջոյնի խօսքով Սրբազան Քահանայապետը շնորհակալութիւն յայտնեց կատարուած «Թանկարժէք աշխատանքի» եւ յատկապէս՝ եկեղեցական խորհուրդներու վերաբերեալ փաստաթուղթի ընդունման համար, շեշտելով որ ան կը նշա-

Աստուծոյ ժողովուրդի բարօրութեան ցանկութեամբ եւ ոչ թէ բարոյական, աստուածաբանական կամ գաղափարական տարբերութիւններով, յիշեցնելով, որ Յիսուս Քրիստոս մարմնացաւ ու դարձաւ Աստուածապաշտ ժողովուրդի անդամ եւ ո՛չ թէ գաղափար: Սրբազան Քահանայապետը ընդգծեց «եղբայրաբար հանդիպելու կարեւորութիւնը՝ զիրար լսելու, կիսուելու ու միասին քալելու նպատակով» եւ ողջունեց տեղական համայնքներու մէջ՝ Եկեղեցիներու մերձեցումի համար երիտասարդ սերունդը ներգրաւելը, որպէսզի «ուսմունքի շուրջ երկխօսութիւնը ընթանայ կեանքի երկխօսութեան հետ միասին»: Կաթողիկէ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ աստուածաբանական երկխօսութեան համատեղ միջազգային յանձնախումբը կը ներառէ Կաթողիկէ, Ղպտի Ուղղափառ, Անտիոքի Ասորի Ուղղափառ, Հայ Առաքելական, Եթովպիոյ Ուղղափառ եւ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Դոկտ. Զրայր Ընայճեանի Հայապահպանման Աշխատանքը Կը Հասնի Յորդանան



Ա.Մ.Մ. Ազգային Մարզական Միութեան Մշակութային Յանձնախումբի Կազմակերպութեամբ, Աստուածաշունչի Ընկերութեան Արաբական Ծոցի Երկիրներու Ընդհանուր Քարտուղար, Դոկտ. Հրայր Ճէպճեանը, Շաբաթ, 18 Յունիս 2022-ին հայրենաշունչ եւ շահեկան դասախօսութիւն մը մատուցեց ԱՄՄ-ի Ալէք Մանուկեան Սրահէն ներս, "Մփիւռ. քահայ իրականութիւններ, Հայապահպանումը եւ Ազգային Ամբողջական Մշակոյթի գործընթացը" խորագրով:»

Ազգային Մարզական Միութիւնը դասախօսութիւններով, գրական կամ մշակութային զանազան միջոցներով, համագործակցելով Մփիւռ. քի կառույցներու, ինչպէս եւ գործօն դեռ տանելով ու մաս կազմելով՝ Հայրենիքի մէջ տարբեր միջոցառումներու, միշտ ձգտած է պահպանել Ամմանահայ փոքր համայնքի Հայցեցի նկարագիրը: Դոկտ. Ճէպճեան իր բանախօսութեան մէջ արծարծեց մշակոյթ հասկացողութիւնը եւ Հայ լեզուի դերը, թէ ինչպէս յարմարուիլ եւ պահպանել մշակոյթը: Նաեւ ինչպէս համաշխարհայնացած աշխարհէն վերադառնալ տեղակայնացման, ազդեցութիւն մը, որը ուղակի եւ խորապէս կը զգացուի Յեղասպանութենէն վերապրած ընտանիքներու համայնքներուն մէջ: Դոկտ. Ճէպճեանը յորդորեց ըլլալ լաւատես, եւ շեշտեց համայնքի կառույցները պահպանելու

կարեւորութիւնը: Այս օգտակար դասախօսութեան ներկայ էին Հայապահպանման հարցով մասնագործոն շոշափելի թիւով տարր մը, որոնք կը վայելէին Գաղութիս Հոգեւոր Առաջնորդ Աւետիս Ծ.Վ. Իփրաճեանի բարձր ներկայութիւնը, ինչպէս եւ Ազգային Տեղական խորհուրդի, ՀՕՄ-ի վարչական անդամներու եւ ուսուցչուհիներու քաջալերանքը:

Ուրախալի է գիտնալ, որ Մեծարգոյ Աստուածաբան Տիար Հրայր Ճէպճեան պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան Մփիւռ. քի Նախարարութեան «Մայրենի Դեսպան» շքանշանով՝ 2014 թուին, ինչպէս եւ Կիլիկիոյ Թեմի՝ Կաթողիկոսութեան՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի Ձեռամբ Դեկտեմբեր 2021ին պարգեւատրուեցաւ «Մերոպ Մաշտոց» շքանշանով՝ մեկնելով իր երկար տարիներու Ազգային-եկեղեցական ու Աստուածաշնչային գործունէութիւններու համար:

Տէր եւ Տիկին Ճէպճեաններու Հայապահպանման աշխատանքին ծանօթ է մեր Ամմանահայ Համայնքը արդէն տարիներ: 2013-ի Ապրիլին, նոյն սրահին մէջ գաղութը վայելած էր Դոկտ. Արտա Ճէպճեանի դասախօսութիւնը «Լեզուապահպանումի Մարտահրաւէրը Յեղասպանութեան 100 Ամեակի Սեմին»: Մարալ Ներսիսեան

Փարամագ եւ «Քսան Կախաղան»

Շարունակուած էջ 14-էն

կան շարժման ճղճիմ մնացորդները դիւրութեամբ թրքական ազգայնական գաղափարախօսութեան ազդեցութեան ենթարկուեցան, եւ անոնք երկար տարիներ անտաբեր ու անզգամ մնացին երկրի այլ ազգերու եւ կրօնքներու հարցերուն հանդէպ: Իսկ ընկերվարական շարժման համաշխարհային գիծը չզարգացաւ ազգայնամոլութեան ազդեցութեան պատճառով: Թուրքիոյ ընկերվարութեան կողմէ Փարամագներու եւ յանձնանոր՝ 19րդ դարու վերջին քառորդին եւ 20րդ դարու սկզբին ազդեցիկ եկած Հայկական յեղափոխական շարժումի ընդունումը

որպէս հիմնադիր տարր՝ պիտի նպաստէ, որ ինքը ժամանակակից կարեւորագոյն հարցը՝ քրտական հարցը լուծէ եւ այդ արիւնալի պատմութենէն դասեր քաղելով իրապաշտ լուծումներ տեղադրէ, ինչպէս նաեւ՝ իր մէջ պարունակող ազգայնամոլ մնացորդներէն ձերբազատուի:

* «Հայ յեղափոխական Փարամագ : Ապտ-ուլ Համիտէն մինչեւ Իթթիհատ Թերաքքի՝ Հայ Ընկերվարականները եւ Յեղասպանութիւնը», 2015, «Թատուն Պատմութեան Հետազոտութեան կայսրութեան մէջ Արդիականացում, Սահմանադրութիւն, Ընկերվարութեան Արմատները եւ Հայ Երեսփոխաններ», 2021:

ԱՆՆԱ ՅԱԿՈՐԵԱՆՆԵՐ ՆԻՍԻ ՄԷջ ՄԱՍՆԱԿԵԾԳԱԼ ՊԱՐՍԱՄԵԱՆ ԴԱՐՈՅԻ 35-ԱՄԵԱԿԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ



Յունիս 26-ին, Ֆրանսա կատարած այցելութեան ծիրէն ներս Հայաստանի Հանրապետութեան վարչապետի տիկին Աննա Յակոբեանը Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի գործոց գլխավոր յանձնակատար Զարեհ Սինանեանի ուղեկցութեամբ հիւրընկալուեցաւ Նիսի Պարսամեան մշակութային համալիրէն ներս:

Վարչապետին տիկինը համալիրի կառավարման խորհուրդի նախագահ Գիրգոր Աժտերհանեանի ուղեկցութեամբ շրջեցաւ վարժարանէն ներս, ծանօթացաւ դպրոցի հիմնադրման պատմութեան, կարեւոր իրադարձութիւններուն եւ աւանդուցիւններուն:

Մտքերու փոխանակումէն ետք ընթացք առաւ Պարսամեան դպրոցի հիմնադրման 35-ամեակին առթիւ կազմակերպուած հանդիսութիւնը: Գիրգոր Աժտերհանեանը իր ելոյթին մէջ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետի տիկնոջ՝ վարժարանի 35-ամեակին առթիւ կազմակերպուող միջոցառման մասնակցելու հրաւերը ընդունելուն համար՝ ընդգծելով Յակոբեանի այցելութեան կարեւորութիւնը՝ ինչպէս իրենց կրթահամալիրին, այնպէս ալ Նիսի հայ համայնքին համար:

վարական մեծ քայլ մըն էր», - շեշտեց Սիոթթին:

«Մենք բազմաթիւ ծրագիրներ իրագործած ենք Հայաստանի եւ մեր քոյր քաղաք Երեւանի համար: Այս տարի եւս կը գտնուէի Երեւան՝ յարգելու համար Յեղասպանութեան զոհերու յիշատակը եւ հանդիպելու քաղաքապետարանի մեր գործընկերներուն հետ՝ անոնց յանձնելով քաղաքապետին յատուկ նամակը ի նշան յետագայ համագործակցութեան», - իր խօսքին մէջ նշած է Փիւռ Ֆիորին:

Աննա Յակոբեանը իր ելոյթին մէջ, շնորհաւորելով դպրոցի 35-ամեակին առթիւ, ընդգծեց, որ եղբայրական Ֆրանսայի հայ համայնքը իր հարուստ պատմութեամբ ու ժառանգութեամբ, Ֆրանսական հասարակութեան մէջ ունեցած բարձր հեղինակութեամբ սփիւռքի կարեւորագոյն համայնքներէն մէկն է:

«Երբ ստացայ Պարսամեան վարժարանի հիմնադրման 35-ամեակի հանդիսութեան հրաւերը, պարզապէս չկրցայ մերժել, որովհետեւ կրթութեան առնչակից որեւէ հարց ինձի համար հոգեհարազատ ու սիրելի է: Պարսամեան վարժարանը իրապէս իւրայատուկ է. Ֆրանսական հանրակրթութեան դպրոց մը ըլլալով՝ ան կը պահպանէ

Զայաստանի Մէջ Պիտի բացուի Զուլանտահայկական Առեւտուրի Պալատ մը



Յուլիս 6-8-ը Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան հոլանտահայկական գործարարութեան օրեր: Միջոցառումը կազմակերպուած է Հայաստանի մէջ Հոլանտայի Թագաւորութեան դեսպանութեան կողմէ՝ հիւրընկալին հարթակի ծիրէն ներս: «Արմէնիա»-ի հետ գրոյցին ընթացքին Հայաստանի մէջ Հոլանտայի Թագաւորութեան դեսպանութեան քաղաքական եւ տնտեսական հարցերով պատասխանատու Լարիսա Յարութիւնեանը նշեց, որ հոլանտահայկական գործարարութեան օրերու ծիրէն ներս նախատեսուած են շարք մը ծրագիրներ՝ շեշտադրելով գիւղատնտեսութեան, տեղեկատուական արհեստագիտութեանց ոլորտները:

«Տրուած ըլլալով, որ Հայաստանի մէջ դեսպանութիւնը նոր է եւ միայն մէկ ու կէս տարուան գործունէութիւն կը ծաւալէ, հետեւաբար, մենք առաջին հերթին պիտի ներկայացնենք մեր տնտեսական առաջնահերթութիւնները, որոնք ունին ճանաչողական բնոյթ: Նախ, հասարակութիւնը կ'իմանայ, որ Հայաստանի մէջ կայ Հոլանտայի դեսպանութիւն, որ ունի տնտեսական բաժին մը: Մեր առաջնահերթութիւնը պիտի ըլլայ տնտեսական համագործակցութեան զարգացումն ու խորացումը: Պիտի խօսինք դրամամիջոցներու տրամադրման գործիքներու մասին, ինչպէս նաեւ պիտի ներկայացուին աջակցութեան գործիքակազմերը: Գործարարութիւններուն համար

ունինք շատ լաւ աջակցութեան ծրագիր մը, որուն ծիրէն ներս անվճար փորձագէտներ պիտի տրամադրենք փոքր եւ միջին ձեռնարկատէրերուն», - ըսաւ Լարիսա Յարութիւնեանը:

Կ'ակնկալուի, որ միջոցառման ծիրէն ներս Հայաստան կ'այցելեն հոլանտացի գործարարներ: Բացի այդ, գործարարներու խումբ մըն ալ պիտի միանայ առցանց: Առանձնացուած ոլորտներն են գիւղատնտեսութիւնը՝ հիմնական առանցքին մէջ ջրամբոցային տնտեսութիւնն է, տեղեկատուական արհեստագիտութիւնները:

Միջոցառման ծիրէն ներս կը նախատեսուի Հայաստանի մէջ հոլանտահայկական առեւտուրի պալատի հանդիսաւոր բացումը, որմէ ետք Հոլանտայի Թագաւորութեան դեսպանութիւնը յուշագիր մը պիտի ստորագրէ հոլանտահայկական առեւտուրի պալատին հետ: Անոր նպատակն է՝ խթանել գործարարական կապերու ամրապնդումը, ներգրաւել ներդրումներ, զարգացնել երկկողմ առեւտրային յարաբերութիւնները, ինչպէս նաեւ բազմազան օժանդակութիւններ ցուցաբերել պալատի անդամներուն:

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին մասնակցել, կրնան գրանցուիլ՝ մինչեւ 2022 թուականի յուլիս 1 նամակ ուղարկելով «JER-EVENTS@minbuza.nl» էլեկտրոնային հասցէին, յստակ նշելով հետաքրքրող ոլորտն ու օրը: Օրակարգը պիտի տրամադրուի գրանցուելէ ետք:

հիմնադիր բարերարներուն՝ Թորոս, Լիւսի եւ Սիւզան Պարսամեաններուն: Թող Քոթ տ'Ալիւրի հայ համայնքէն ներս այսպիսի նշանակալի յրեթեանները շատ ըլլան, մշտապէս օրակարգի վրայ մնան հայկական

թեմաները, անոնք քննարկուին մայրենի լեզուով», - ելոյթը եզրափակելով ըսաւ Աննա Յակոբեանը՝ յոյս յայտնելով, որ իրենց յաջորդ հանդիպումը ըլլայ Երեւանի մէջ:



Ելոյթ ունեցաւ նաեւ պատգամաւոր էրիք Սիոթթին: Պատգամաւորը յոյս յայտնեց, որ Հայաստանի գործող իշխանութեան շնորհիւ հայ-ֆրանսական կապը աւելի եւս պիտի սերտանայ:

«2018 թուականին մենք ուշի ուշով կը հետեւէինք Հայաստանի մէջ ծաւալուող իրադարձութիւններուն: Այն, ինչ որ կատարեց հայ ազգը պարոն Փաշինեանին գլխավորութեամբ, ժողովրդա-

հայկական կրթութեան ամբողջ բաղադրիչը՝ սկսեալ հայոց լեզուէն մինչեւ հայկական մշակութիւն, երգ, պար, թատրոն», - շեշտեց Աննա Յակոբեանը:

Վարչապետի տիկինը յատկապէս կարեւորեց այն փաստը, որ սփիւռքի հայկական դպրոցներու առաջին համագումարը տեղի ունեցած է Պարսամեան դպրոցէն ներս:

«Եկէք անգամ մը եւս մեր երախտիքի խօսքը ուղղենք դպրոցի

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Դաշտադէմի Անրոցին Մէջ Տեղի Ունեցած Է Ազգային Երգ ու Պարի Փառատօն



Հայրենապաշտ հայի անկոտորում ոգին ու միասնութիւնը արտացոլող երգ ու պարով, 26 Յունիսին, Դաշտադէմի ամրոցին մէջ տեղի ունեցած է մշակութային գունեղ փառատօն՝ համեմուած ազգային ու տեսարաններու եւ բարիքներու հիւրասիրութեամբ:

Փառատօնի աւանջին Սամնայ պարերն էին, իսկ ուղերձը մէկն էր՝ հայր անկոտորում է, հայր կ'արարի ու եռանդուն կ'արարէ. ինչպէս Գէորգ էմին ըսած է՝ չի՛ր յողթի ոչինչ այն քաջ ժողովրդին, որ այս ջանքով ու այս կամքով պարել զիտի...

Միջոցառման կը մասնակցէին Արագածոտնի մարզպետ Սերկէյ Մովսիսեանը, Ազգային ժողովի պատգամաւորներ, Թալին համայնքի ղեկավարի պաշտօնակատար Տաւրոս Սահէեանը, փոխմարզպետ Յարութիւն կուլեանը, Արագածոտնի մարզի բնակիչներ, մայրաքաղաքէն, այլ մարզերէ եւ արտերկրէն Հայաստան ժամանած զբօսաշրջիկներ:

Ներկաներուն ողջունեցին մարզպետ Սերկէյ Մովսիսեանը, Գէորգ Պապոյեանը, Տաւրոս Սահէեանը:

Սերկէյ Մովսիսեանը ողջունի խօսքին մէջ ընդգծած է, որ մարզին մէջ ազգային ոգին բարձր պահելու, հայրենասէր սերունդ դաստիարա-

կելու, ազգային մշակոյթը հանրահռչակելու տեսանկիւնէն նման միջոցառումները չափազանց կարեւոր են:

Պատգամաւոր Գէորգ Պապոյեանը, ողջունելով մշակութային փառատօններու կայացումը, նշած է, որ Թալինի մէջ հաստատուած սասունցիները հայի հայրենասէր, խրոխտ տեսակը լաւագոյնս կը ներկայացնեն նաեւ ազգային երգ ու պարի փառատօններուն մէջ:

Տաւրոս Սահէեանը իր ելոյթին մէջ հաւաստիացուցած է, որ Թալինը ազգային միջոցառումներու շրջանակին մէջ յաճախակի պիտի հիւրընկալէ տարբեր տարածաշրջաններու բնակիչները՝ հայկական մշակոյթին հաղորդակցուելու գեղեցիկ միջավայր ստեղծելով:

Ելոյթ ունեցած են Թալինի պարային համոյթները, նուազախումբերը, երգիչները՝ պարերու շուրջ համախմբե լով պետական այրերն ու փառատօնի մասնակիցները:

Մարզպետին կողմէ պատուօգրեր ստացած են լաւագոյն պարային խումբերն ու երգիչները: Փառատօնը ամփոփուեցաւ միասնական շուրջպարով:

... եւ Սասունը նորից պարեց, ոտքը զարկեց, ձեռքով արեց:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Շարունակուած էջ 13-էն

ուսմանը իրենց բարենորոգումներ. մերժել հարկ հատուցանել. գործադրել ամէն տեսակ հակակառավարչական ցոյցեր եւ այլն...:

3.- ՏԵՌՈՐ

Տեռորի նպատակն է պաշտպանել ժողովրդին, երբ սա ենթակայ է հալածման. բարձրացնել նրա ոգին, յեղափոխական տրամադրութիւն ծագեցնել ու անցնել նրա մէջ, յայտնուել համարձակ՝ բողոքող ժողովրդի կողմից՝ կառավարութեան դէմ եւ այդպիսով պահպանել ժողովրդի հաւատքը գործի յաջողութեան վերաբերութեամբ. խախտել կառավարութեան ուժը, նրա հզօրութեան համբաւը նսեմացնել, սարսափահար դարձնել նրան: Դրանց կատարելու կերպերն են.- Ոչնչացնել կառավարչական թուրք եւ հայ ամենավնասակար անձերին, ոչնչացնել լրտեսներին, դաճաններին:

4.- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Մէկ ընդհանուր կազմակերպութիւն՝ բաղկացած բազմաթիւ յեղափոխական ընկերութիւններից, որոնք իրենց մէջ ընտրելով մի անդամ՝ այդ ընտրուածներից կը

կազմեն կազմակերպութեան կեդրոնական մարմինը, Վարչական եւ Գործադիր մարմինը, որի շուրջը բոլոր ընկերութիւնները ժողովուած՝ կ'ունենան իրար հետ սերտ դաշնակցային կապակցութիւն:

ա) Տեռորական - պատերազմական կազմակերպութիւն, բացառապէս տեռորական գործողութիւններ գործադրելու համար:

բ) Հիմնել յեղափոխական ընդարձակ կազմակերպութիւններ գիւղացիների մէջ:

գ) Հիմնել յեղափոխական ընդարձակ կազմակերպութիւններ բանուորների մէջ:

դ) Հիմնել յեղափոխական - պատերազմական կազմակերպութիւններ թէ՛ գիւղացիների եւ թէ՛ բանուորների մէջ:

Այդ երեք վերջին կազմակերպութիւնների դերն ու կարեւորութիւնը մեծ է եւ նրանց գոյութիւնն անհրաժեշտ պայման է յեղափոխական գործի յաջողութեան համար: Մի կողմից՝ յեղափոխական մարտի ընթացքին՝ պահպանելով ու աջակցելով յեղափոխականներին, նրանք ինքն՝ ըստ ինքեան յայնուում են յեղափոխականների ամենակարեւոր ոյժը թէ՛ առանձնապէս եւ թէ՛

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան տխուր աուիթով Տիար Ստեփան Սամուէլեան ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն:

Առ այդ \$200 կը նուիրէ «Մասիս»ին: *****

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան տխուր աուիթով Կիլիկեան Բարեսիրական Միութեան վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար զակիւն՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեաններուն:

Առ այդ \$200 կը նուիրէ «Մասիս»ին:

ժողովրդի մէջ, իբրեւ ժողովրդային պատրաստի յեղափոխական տարր եւ ապստամբական զօրագունդ, եւ միւս կողմից՝ նրանք հանդիսանում են ժողովրդի մէջ յեղափոխական ոգու ամենաընդունակ անցնողներ, յեղափոխական մտքեր տարածողներ, եւ առաւել եւս ներկայանում են պատրաստի տարր՝ ընդունակ յաջող ելք ունեցող ապստամբութիւնից յետոյ՝ պահպանելու իրենց ձեռք բերած անկախութիւնը: Այնուհետեւ իրենց ձեռքն առնելու համար քաղաքական դեկը եւ հասարակական նոր կազմակերպութիւնը՝ դնելու ռամկայանական սկզբունքների վրայ, այդ ամբողջ ընթացքում պաշտպանելով ժողովրդային շահերը:

ե) Յեղաշրջում կազմելու եւ գործադրելու եւ ազգային անկախութիւն հռչակելու եղանակներն ու նախագիծը չեն կարող հրատարակուել:

Վաստակել համակրութիւնը հայ ժողովրդին Վիճակակից Հայաստանի՝ միւս բնակիչների ու ցեղերի, որպէսիններն են ասորիները, եգիպտացիները, քիւրտները եւ այլնի դէպի հայ յեղափոխական գործը եւ նրանց աջակցութիւնն այդ գործում, որը միաժամանակ յատնուած է եւ նրանց, իբրեւ նոյն բռնակալութեան: ձեռքով ճշուած ժողովուրդների ազատութեան գործը:

Որեւէ պատերազմ մղուած այս կամ այն օտար պետութեան կողմէ թուրքիայի դէմէ պէտք է համարել յարմար ընդհանրապէս յեղափոխականների համար իրենց մտաւայ նպատակն իրագործելու, միակերպ գործութեամբ յետ հրելով ու հարուածնելով, ինչպէս թուրք պետութեան, նոյնպէս մէկ օտար տէրութեան, որ դիտաւորութիւն կ'ունենայ հայ ժողովրդին գրաւել իր գիրկը: Դրա համար հարկաւոր է կազմակերպուած պատերազմական - ապստամբական ոյժերին իրենց գործողութիւնների ժամանակ՝ պատերազմի ընթացքում, սկիզբից մինչեւ վերջ՝ տալ մի որոշ բացառիկ դիրք՝ իրենց երկու թշնամիների վերաբերմամբ, որոնց հանդէպ իրենք յայտնուելով հանդերձ երկրորդ հակառակորդ, այնուամենայնիւ զլիաւորապէս կը ձգտին տապալել թուրքիայի գերիշխանութիւնը հայ ժողովրդի վրայից: Այդ նպատակով պէտք է ուկենալ այդ գործունէութեան որոշ նախագիծը, որը կարողանայ վերոյիշեալ պատերազմի ժամանակ պատերազմական - ապստամբական ոյժերի գործողութիւնները դնել այնպիսի հողի վրայ, որ բացայայտ կերպով որոշէ նրանց բնաւորութիւնը, այսինքն ձգտումը դէպի անկախութիւն, - այն ոյժերը չզառնան գործիք իրենց մեծ թշնամիներից որեւէ մէկը ձեռքին՝ ուղղուած դէպի երկրորդ թշնամին:

ՀՆՁԱԿԻ խումբը համարում է իբրեւ անհրաժեշտութիւն, որ այսօր հայ յեղափոխական բոլոր ոյժերը պէտք է նուիրուեն բացառա-

պէս թրքահայ ժողովրդային դատի պաշտպանութեան, եւ այդ անհրաժեշտութեան հիմունքները հետեւեալներն են.-

1) Հայութեան ամենաստուար մեծամասնութիւնը, այն է՝ երկու երրորդ մասը, կազմում են թրքահայերը եւ նրանց բնակավայր մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է:

2) Հայութեան ամենաստուար մեծամասնութեան դատը Պերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածի գորութեամբ արդէն մտած է միջազգային իրաւունքի դրական շրջանը եւ ճանաչուած է եւրոպական մեծ պետութիւնների կողմից:

3) Թուրքիայի քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու նիւթական ամենաանկարգ ու անանկացած դրութիւնը եւ դրանից առաջացող թուրք պետութեան իբրեւ քաղաքական ինքնուրոյն գոյութեան, մօտակայ հաւաստի կործանումը, որին միւս կողմից նպաստում են եւրոպական տերութիւնների յաճախակի հարուածները, ինչպէս իր՝ եւրոպական թերակղզում, նոյնպէս եւ Հայաստանում, թուրքիայի հողի սիստեմարար պատառ-պատառ լինելը, ընկնելով օտար տերութիւնների ձեռքը, - այդ բոլորն այսօր իսկ ծայրայեղ քայքայման ու աղքատութեան են հասցրել թրքահայ ժողովրդին, շարտել նրան պանդխտութեան կորստաբեր հոսանքում: Այդ վիճակի մէջ մնալով, մօտ ապագայում նա կը լինի թշուառ որս՝ մէկ ուրիշ տէրութեան, որը կը խլէ նրան թուրքիայից, եւ այդպիսով հայութեան մեծամասնութիւնը մի բռնապետական աւերիչ ձեռքից կ'ընկնի մէկ ուրիշ բռնապետական տէրութեան ճիրանները. նրա ազատութեան եւ մարդկային առաջդիմութեան դործը կը յետաձգուի երկար ժամանակով: Հայութեան այդ բոլոր թշուառութիւնը պէտք է նախագրոււնացնել հենց այսօրուանից:

Թրքահայ ժողովրդի դրութիւնն այսօր Հայութեան ամահիւանդոտ կողմն է: Եւ ամբողջ հայութեան պարտականութիւնն է՝ այսօր իսկ բուժել այդ հիւանդութիւնը եւ առաջնապէս թրքահայ ժողովրդի ազգային անկախութիւնն ու քաղաքական ազատութիւնը ձեռք բերելուց ու հաստատելուց յետոյ՝ այդպիսի գորութեամբ հարուանակել ընդհանուր հայութեան ազատութեան գործը, ազատել օտարների լծից ռուսահայն ու պարսկահայը եւ կազմել այդ երեքից մի դաշնակցային ռամկապետական Հանրապետութիւն, որ համայն հայութեան համար ճամբայ կը բանայ դիմելու դէպի Հեռաւոր Նպատակը, դէպի իտիալական հասարակական կազմակերպութիւնը, դէպի սոցիալիստական աշխարհը, դէպի ուր պիտի դիմէ համայն մարդկութիւնը:

ՀՆՁԱԿ, 1888, Հոկտեմբեր - Նոյեմբեր

SADA Cup. Հայաստանի Հաւաքականը Պարտուեցաւ Երկու Կէտի Տարբերութեամբ



Երեւանի Կարէն Դէմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ աւարտուող SADA CUP պասթեթպոլի միջազգային մրցաշարին Հայաստանի ազգային հաւաքականը երրորդ հանդիպումը կատարեց:

Յունիսի 26-ին NBA մարզիչ Ռեքս Քալամեանի գլխավորած Հայաստանի հաւաքականը մրցեցաւ Սուրիոյ հաւաքականի հետ եւ գերլարուած պայքարի ընթացքին պարտուեցաւ 57:59 արդիւնքով:

Յունիսի 23-էն Երեւանի կատարուած պասթեթպոլի միջազգային մրցաշարին Ռեքս Կալամեանի գլխավորած խումբը կատարեց երեք հանդիպումներ: Մեկնարկային խաղին 94:59 արդիւնքով յաղթեց «Թիմ ԱՄՆ»-ին, երկրորդ խաղին՝ 77:73 արդիւնքով յաղթանակ արձանագրեց Իրանի հաւաքականին նկատմամբ: SADA Cup-ին կը մասնակցէին 4 խումբ՝ Հայաստան, Սուրիա, Իրան եւ «Թիմ ԱՄՆ»:

Հայաստանի հաւաքականը Ռեքս Կալամեանի գլխավորութեամբ կը մեկնի Մալթա, ուր Յունիսի 28-էն Յուլիսի 3-ը կը մասնակցի Եւրոպայի փոքր երկիրներու առաջնութեանը:

ՖԻՖԱ. Հայաստանի Հաւաքականը 92-րդն է

Ֆութպոլի միջազգային ֆետերացիան (ՖԻՖԱ) հրապարակած է ազգային հաւաքականներու ամենամտեայ դասակարգման աղիւսակը: Հայաստանի հաւաքականը մնացած է նոյն տեղը եւ 92-րդն է:

Առաջատար տասնեակին մէջ են Պրագիլը, Պելճիքան, Արժանթինը, Ֆրանսան, Անգլիան, Սպանիան, Իտալիան, Հոլանտան, Փորթուգալը եւ Դանիան:

Ազգերու Լիգայի B լիգայի Հայաստանի հաւաքականի հետ նոյն խումբին մէջ ընդգրկուած Ուքրանիան 27-րդն է, Սլովտիան՝ 45-ը, Իռլանտան՝ 47-ը:

Մեսին 1 Տարուան Սեջ ՊՍԺ-ին Բերած Է Մօտ 700 Միլիոն Եւրոյի Եկամուտ

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ն անցնող ամրան «Պարսելոնայի» նախկին յարձակող Լիոնել Մեսիին անվճար ձեռք բերելու շնորհիւ մէկ տարուան համար ապահոված է լրացուցիչ 700 միլիոն եւրոյի եկամուտ: Փարիզեան ակումբը առաջին անգամ վաճառած է 1 խաղցողի 1 միլիոնէն աւելի խաղաշապիկը: Մեսիի իմիջային իրաւունքի շնորհիւ ՊՍԺ-ն հովանաւորներու հետ կնքած է 10 պայմանագիր: Ակումբի հետեւորդներու թիւը սոցիալական ցանցերուն վրայ աւելցած է 15 միլիոնով:

Յունիսի 24-ին Մեսին կը նշէ ծննդեան 35-րդ տարեդարձը: Անցած մրցաշրջանին ան ՊՍԺ-ի հետ մասնակցած է 34 հանդիպման, նշանակած է 11 կոլ, կատարած է 15 կոլային փոխանցում: Անոր պայմանագիրը նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը:

«Լիվերփուլ» Պատրաստ Է Վաճառել Մոհամեդ Սալահին

Անգլիոյ փոխախոյեան «Լիվերփուլը» պատրաստ է վաճառել 30-ամեայ եգիպտացի յարձակող Մոհամեդ Սալահին, եթէ ստանայ 70 միլիոն եւրոյէն սկսող առաջարկներ, կը հաղորդէ The Sun-ը: Անոր պայմանագիրը լիվերփուլեան ակումբի հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը: Կողմերը երկարաձգման շուրջ բանակցութիւններուն արդիւնքի չեն հասած:

Սալահի ծառայութիւններով հետաքրքրուած է Սպանիոյ ախոյեան եւ Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալը»: Ֆութպոլիստը եւս կը ցանկայ իր գործունէութիւնը շարունակել Արքայական ակումբին մէջ:

Անցած մրցաշրջանին Սալահը գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբի հետ մասնակցած է 51 հանդիպման, նշանակած է 31 կոլ, կատարած է 16 կոլային փոխանցում: Ան ճանչուած է Փրեմիեր Լիգայի անցած մրցաշրջանի լաւագոյն ֆութպոլիստ:

Սալահը 2017 թուականէն հանդէս կու գայ «Լիվերփուլի» կազմէն ներս: Transfermarkt-ը անոր փոխանցման արժէքը կը գնահատէ 90 միլիոն եւրո:

Արման Ծառուկեան. Ներողութիւն Կը Խնդրեմ Իմ Երկրպագուներէն Եւ Հայաստանի Հայրենակիցներէն



Ռուսահայ Արման Ծառուկեանը խառը մենամարտերի UFC Vegas 57 մրցաշարի գլխավոր մենամարտին լեհ Մատեուշ Գամրոտէն պարտութիւն կրելէ յետոյ ներողութիւն խնդրած է եւ կարծիք յայտնած է, որ ինքն յաղթած է:

«Չգիտեմ՝ ինչ տեղի ունեցաւ: Ես լաւ էի պատրաստուել այս մենամարտին: Պէտք է աւելի լաւ կուէի, գիտեմ իմ հնարաւորութիւնները: Այս իմ առաջին 5-նաունտնոց մենամարտն էր: Կ'աշխատեմ իմ սխալներէս վրայ: Ներողութիւն եմ խնդրում իմ երկրպագուներէրից եւ հայրենակիցներէրից Հայաստանում: Կարծում եմ՝ ես եմ յաղթել այս մենամարտում: Ես յաղթեցի երեք ռաունտում: Չգիտեմ՝ ինչ էին մտածում մրցավարները: Ես կը վերադառնամ, դեռ երիտասարդ եմ: Չեմ կարողանում պարտուել, գիտեմ, որ ես աւելի ուժեղ էի», - մենամարտէն յետոյ ըսած է Արման Ծառուկեանը:

Մատեուշ Գամրոտը յաղթանակ արձանագրած է մրցավարներու միաձայն որոշմամբ:

Քեթի Լեդեկին՝ Աշխարհի 17-ակի Ախոյեան



Ամերիկացի Քեթի Լեդեկին դարձաւ աշխարհի 17-ակի ախոյեան: Հունգարիայի մայրաքաղաք Պուտայեշտի մէջ կատարուող աշխարհի առաջնութեան 25-ամեայ մարզուհին ոսկէ մետալակիր դարձած է ազատ ոճով 1500 մետրի մէջ՝ յաղթահարելով 15 վայրկեան եւ 30,15 երկվայրկեանի մէջ: Պուտայեշտի մէջ ան նուաճած էր նաեւ ազատ ոճով 400 մետրի ոսկի մետալը:

Քեթի Լեդեկին աշխարհի ախոյեանի առաջին տիտղոսը նուաճած է 2013 թուականին: Ան կանանց ռեքորտակիրն է աշխարհի առաջնութեան ոսկէ մետալներու քանակով:

Լեդեկին նաեւ Ողիմպիական խաղերու 7-ակի ախոյեան է, եռակի փոխախոյեան:

Կարեթ Պեյլը Իր Գործունէութիւնը Կը Շարունակէ «Լոս Անճելոսի» Մէջ

Մատրիտի «Ռեալէն» ազատ գործակալի կարգավիճակով հեռացած 32-ամեայ ուելսցի յարձակող Կարեթ Պեյլը իր գործունէութիւնը կը շարունակէ ամերիկեան «LAFC» խումբէն ներս:

Կարեթ Պեյլը 1 տարուայ պայմանագիր կը կնքէ հիւսիսամերիկեան ՄԼՍ-ը ներկայացնող ակումբին հետ:

Ուելսի հաւաքականի առաջատարը 2013 թուականէն հանդէս կու գար Արքայական ակումբէն ներս, որ անոր համար Լոնտոնի «Թոթեմհեմին» վճարած էր 101 միլիոն եւրո:

Ուելսի հաւաքականը 1958 թուականէն յետոյ առաջին անգամ հանդէս կու գայ աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարին: Ե խումբին մէջ Ուելսի մրցակիցներն են Անգլիա, Իրան եւ ԱՄՆ: